

Վ. Ի. ՏԻԳՐԱՆՅԱՆ

ՄԱԿՐՈՏՆԵՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Երևան-2024



ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Վ.Ի. ՏԻԳՐԱՆՅԱՆ

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ծրագիր

Դասախոսությունների և սեմինար
պարապմունքների պլան, նյութեր
Թեստային առաջադրանքներ

Ուսումնամեթոդական ձեռնարկ

Երևան

ՀՌՀ հրատարակչություն

2024

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ

В.И. ТИГРАНЯН

МАКРОЭКОНОМИКА

Программа

План лекций и семинаров, материалы

Тестовые задания

Учебно-методическое пособие

Ереван

Издательство РАУ

2024

ՀՏԴ 330.101.542 (075.8)

ԳՄԴ 65.012.1g73

Պ 505

Ուսումնամեթոդական ձեռնարկը հրատարակության է երաշխավորվել Հայ-ռուսական համալսարանի գիտարեխնիկական և խմբագրական-հրատարակչական խորհուրդների կողմից:

Պատասխանատու խմբագիր՝ տ.գ.թ. Ի.Բ. Պետրոսյան

Գրախոսներ՝ Պոլիտեխնիկական համալսարանի Ինժեներական տնտեսագիտություն և կառավարում ֆակուլտետի դասախոս, տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ **Ք.Յու.Քաղապարյան**, ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի դոցենտ, տնտ.գիտ.թեկնածու **Ա.Ա. Խառապյան**

Տիգրանյան Ի.Վ.

Պ 505 Մակրոտնտեսագիտություն՝ ծրագիր, դասախոսությունների և սեմինար պարապմունքների պլան, նյութեր, թեստային առաջադրանքներ՝ ուսումնամեթոդական ձեռնարկ / Վ.Ի. Տիգրանյան.

– Եր.: ՀՌՀ հրատարակչություն, 2023. – 84 էջ:

Սույն աշխատանքը «Մակրոտնտեսագիտություն» ուսումնական դասընթացի ուսումնամեթոդական ուղեցույցն է, որը դասավանդվում է Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի տնտեսագիտության և բիզնեսի ինստիտուտում՝ «Տնտեսագիտություն», «Ֆինանսներ» և «Կառավարում» մասնագիտությունների բակալավրիական ծրագրով: Ձեռնարկում ներառված է 14 թեմա, որոնք ներկայացնում են «Մակրոտնտեսագիտություն» դասընթացի հիմնական բովանդակությունը: Յուրաքանչյուր թեմայի շրջանակում ներկայացված է դասախոսության ծրագիրը, հակիրճ շարադրված են հիմնական տեսական դրույթները, առավել կարևորները ներկայացված են մանրամասն, բերված են մակրոտնտեսական մոդելներ, որոնք մի շարք մեծությունների հաշվարկման հնարավորություն են տալիս: Ներկայացված են նաև դասախոսության և սեմինար պարապմունքների պլանը, առաջարկվող գրականությունն ու համացանցային աղբյուրները, թեստային առաջադրանքների օրինակներ:

Ուսումնամեթոդական ձեռնարկը կարող է օգտակար լինել բարձրագույն ուսումնական հաստատություններում «Մակրոտնտեսագիտություն» առարկան դասավանդող դասախոսների, ինչպես նաև ուսանողների համար, որոնք այն կարող են օգտագործել որպես ուղեցույց տնային աշխատանքների կատարման, սեմինար պարապմունքներին, միջանկյալ ստուգումներին և քննություններին պատրաստվելու համար: Այն կարող է օգնել նաև դասընթացն ինքնուրույն յուրացնել ցանկացողներին:

Դասընթացը կազմված է տնտեսագիտական մասնագիտությունների ուսանողներին մակրոտնտեսագիտության դասավանդման ստանդարտներին համապատասխան, և տվյալ ուսումնամեթոդական ձեռնարկի կիրառումը հնարավոր է մակրոտնտեսագիտության արտասահմանյան և ռուսական բազային դասագրքերի հետ համատեղ:

ՀՏԴ 330.101.542 (075.8)

ԳՄԴ 65.012.1g73

ISBN 978-9939-67-296-0

© ՀՌՀ հրատարակչություն, 2024

© Տիգրանյան Վ.Ի., 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	7
Թեմա 1. Մակրոտնտեսագիտության զարգացումը, ծագումը: Մակրոտնտեսագիտության ուսումնասիրության օբյեկտը, առարկան: Ի՞նչ հարցերի է պատասխանում.....	12
Թեմա 2. Մակրոտնտեսագիտության հիմնահարցերը, մեթոդաբանությունը: Մակրոտնտեսական վերլուծությունների ուղղությունները: Մակրոտնտեսական մոդելները.....	17
Թեմա 3. Տնտեսական գործունեության արդյունքների չափումը: Մակրոտնտեսական ցուցանիշների հաշվարկման մեթոդները.....	22
Թեմա 4. Ազգային արդյունքի արտադրությունը, բաշխումը, օգտագործման ուղղությունները: Արտադրության գործոնները և ամբողջական առաջարկը: Կոբ-Դուգլասի արտադրական ֆունկցիան.....	25
Թեմա 5. Հավասարակշռության հաստատման մեխանիզմը ապրանքների ու ծառայությունների շուկայում: Հավասարակշռությունը ֆինանսական շուկայում: Հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը ֆինանսական շուկայի հավասարակշռության վրա.....	31
Թեմա 6. Փողի շուկան: Փողը և ինֆլյացիան: Ինֆլյացիան և տոկոսադրույքները.....	34
Թեմա 7. Հավասարակշռությունը աշխատանքի շուկայում: Գործազրկությունը որպես տնտեսական երևույթ.....	37
Թեմա 8. Մակրոտնտեսական ընդհանուր հավասարակշռությունը: Ամբողջական պահանջարկի և ամբողջական առաջարկի AD-AS մոդելը: Մակրոտնտեսական կայունացման քաղաքականությունը.....	40

Թեմա 9. Մակրոտնտեսական միաժամանակյա հավասարակշռությունը ապրանքների ու ծառայությունների և փողի շուկաներում: IS-LM մոդելը: Ամբողջական պահանջարկի կարգավորումը.....	44
Թեմա 10. Ամբողջական առաջարկը և Ֆիլիպսի կորը: Առաջարկի խթանման քաղաքականությունը: Առաջարկի տնտեսագիտությունը.....	48
Թեմա 11. Տնտեսական աճի հայեցակարգը և գործոնները: Սղոուի տնտեսական աճի մոդելը.....	52
Թեմա 12. Բաց տնտեսությունը: Կապիտալի միջազգային հոսքերը և առևտրային հաշվեկշիռը: Վճարային հաշվեկշիռը: Փոքր, բաց տնտեսության մոդելը: Տնտեսական քաղաքականության ազդեցությունը փոքր, բաց տնտեսության վրա.....	57
Թեմա 13. Արժույթային շուկան: Հիմնական հասկացություններ: Ազգային արժույթի անվանական փոխանակային կուրսը և իրական փոխանակային կուրսը: Մակրոտնտեսական քաղաքականության ազդեցությունը փոքր, բաց տնտեսության հավասարակշռված իրական փոխանակային կուրսի վրա.....	61
Թեմա 14. Փոքր, բաց տնտեսության Մանդել-Ֆլեմինգի մոդելը: Տնտեսությունը կարճաժամկետում: Մանդել-Ֆլեմինգի մոդելը փոփոխվող գներով՝ որպես ամբողջական պահանջարկի տեսություն: Կարճաժամկետ և երկարաժամկետ հավասարակշռությունը փոքր, բաց տնտեսությունում.....	65
Առաջարկվող գրականություն և համացանցային աղբյուրներ.....	68
Սեմինար պարապմունքների համար թեստային առաջադրանքների օրինակներ.....	70

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դասընթացը հնարավորություն է ընձեռում ամբողջական պատկերացում կազմելու մակրոտնտեսագիտության առարկայի, հիմնահարցերի, վերլուծության ուղղությունների, մեթոդների, ինչպես նաև մակրոտնտեսական ցուցանիշների, շուկաների, մոդելների, քաղաքականության վերաբերյալ: Մակրոտնտեսական մոդելների միջոցով բացատրվում է ազգային արդյունքի արտադրության, բաշխման, օգտագործման մեխանիզմը, տնտեսական աճը, ամբողջական պահանջարկի և ամբողջական առաջարկի որոշման մեխանիզմը: Տարբեր մակրոտնտեսական շուկաներում, տարբեր ժամանակահատվածներում ներկայացվում է հավասարակշռության հաստատման մեխանիզմը, վերլուծվում է կայունացման քաղաքականության ազդեցությունը մակրոտնտեսական հավասարակշռության վրա: Ներկայացվում է բաց տնտեսության բնութագիրը, հաշվարկվում են դրանում մակրոտնտեսական ցուցանիշները, քննարկվում է ներքին ու արտաքին քաղաքականությունների ազդեցությունը մակրոտնտեսական վիճակի վրա: Բացահայտվում է մակրոտնտեսագիտության դերը մակրոտնտեսական իրավիճակի վերլուծության, համապատասխան որոշումների կայացման և տնտեսության զարգացման գործում:

Դասընթացը պարունակում է 14 թեմա, 96 լսարանային ժամ, ապահովում է 12 կրեդիտ:

Ուսանողների սկզբնական գիտելիքերի, կարողությունների և հմտությունների նկատմամբ պահանջները

Դասընթացն ուսումնասիրելու համար անհրաժեշտ են բազային գիտելիքներ «Բարձրագույն մաթեմատիկա», «Տնտեսագիտության հիմունքներ», «Տնտեսագիտական ուսմունքների պատմություն», «Վիճակագրություն» դասընթացներից: Անհրաժեշտ է օտար լեզուների և համակարգչային ծրագրերի՝ Ms. Office (Word, Excel, Power Point), իմացություն:

Դասընթացի նպատակն ու խնդիրները

Դասընթացի նպատակն է մատուցել մակրոտնտեսական հիմնախնդիրների բացահայտման, մակրոտնտեսական երևույթների վերլուծության, մակրոտնտեսական կայունացնող քաղաքականության գործիքների և իրականացման մեխանիզմի վերաբերյալ տեսական, գործնական գիտելիքներ և ձևավորել կիրառական հմտություններ:

Դասընթացի խնդիրներն են՝ ուսումնասիրել.

- Մակրոտնտեսագիտության ծագումը,
- Մակրոտնտեսական վիճակը բնութագրող ցուցանիշների հաշվարկման մեթոդները,
- Մակրոտնտեսական երևույթների միջև փոխադարձ կապերը,
- Ազգային արդյունքի արտադրության, բաշխման և օգտագործման գործընթացը,
- Մակրոտնտեսական հավասարակշռության մոդելները,
- Տնտեսական աճի մոդելները,
- Տնտեսական տատանումները, պարբերաշրջանները,
- Տնտեսության կայունացման քաղաքականության ազդեցությունը տարբեր ժամանակահատվածներում,
- Բաց տնտեսության օրինաչափությունները և գործողության մեխանիզմը մակրոմակարդակում:

Առարկան յուրացնելու պահանջները.

Գիտելիքները.

- մակրոտնտեսագիտության կողմից լուծվող հիմնահարցերը և մակրոտնտեսական վերլուծության ուղղությունները,
- մակրոտնտեսական երևույթների ուսումնասիրության մեթոդները,
- հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները, դրանց ներկայացվող պահանջները,
- մակրոտնտեսական հավասարակշռության մոդելները,

- մակրոտնտեսական քաղաքականության իրականացման մեխանիզմը:

Կարողությունները

- Հաշվարկել մակրոտնտեսական հիմնական ցուցանիշները:
- Առանձնացնել մակրոտնտեսական հիմնախնդիրները և կատարել վերլուծություններ:
- Բացատրել մակրոտնտեսական երևույթների միջև փոխադարձ կապերը:
- Համեմատական վերլուծություն իրականացնել տարբեր երկրների զարգացման մակարդակների միջև:

Հմտությունները

Ուսանողը տիրապետում է

- Տնտեսագիտական տարբեր դպրոցների մակրոտնտեսական երևույթների մեկնաբանությունների առանձնահատկություններին:
- Մակրոտնտեսական քաղաքականության արդյունավետ գործիքների ընտրությանը և իրավիճակային լուծումների առաջադրմանը:
- Տարբեր ժամանակահատվածներում մակրոտնտեսական քաղաքականության փոխանցման մեխանիզմի ուղիներին:

Դասընթացի թեմաների բաշխումը

Թեմաներ	Դասա- խոսու- թյուն (48 ժամ)	Սեմինար (48 ժամ)
Թեմա 1. Մակրոտնտեսագիտության զարգացումը, ծագումը: Մակրոտնտեսագիտության ուսումնասիրության օբյեկտը, առարկան: Ի՞նչ հարցերի է պատասխանում	2	2
Թեմա 2. Մակրոտնտեսագիտության հիմնահարցերը, մեթոդաբանությունը: Մակրոտնտեսական վերլուծությունների ուղղությունները: Մակրոտնտեսական մոդելները	2	2
Թեմա 3. Տնտեսական գործունեության արդյունքների չափումը: Մակրոտնտեսական ցուցանիշների հաշվարկման մեթոդները	2	2
Թեմա 4. Ազգային արդյունքի արտադրությունը, բաշխումը, օգտագործման ուղղությունները: Արտադրության գործոնները և ամբողջական առաջարկը: Կոր-Դուզլասի արտադրական ֆունկցիան	4	4
Թեմա 5. Հավասարակշռության հաստատման մեխանիզմը ապրանքների ու ծառայությունների շուկայում: Հավասարակշռությունը ֆինանսական շուկայում: Հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը ֆինանսական շուկայի հավասարակշռության վրա	2	2
Թեմա 6: Փողի շուկան: Փողը և ինֆլյացիան: Ինֆլյացիան և տոկոսադրույքները	4	4
Թեմա 7. Հավասարակշռությունը աշխատանքի շուկայում: Գործազրկությունը որպես տնտեսական երևույթ	2	2
Թեմա 8. Մակրոտնտեսական ընդհանուր հավասարակշռությունը: Ամբողջական պահանջարկի և ամբողջական առաջարկի AD-AS մոդելը: Մակրոտնտեսական կայունացման քաղաքականությունը	4	4

Թեմաներ	Դասա- խոսու- թյուն (48 ժամ)	Սեմինար (48 ժամ)
Թեմա 9. Մակրոտնտեսական միաժամանակյա հավասարակշռությունը ապրանքների ու ծառայությունների և փողի շուկաներում: IS-LM մոդելը: Ամբողջական պահանջարկի կարգավորումը	4	4
Թեմա 10. Ամբողջական առաջարկը և Ֆիլիպսի կորը: Առաջարկի խթանման քաղաքականությունը: Առաջարկի տնտեսագիտությունը	4	4
Թեմա 11. Տնտեսական աճի հայեցակարգը և գործոնները: Սոլոուի տնտեսական աճի մոդելը	4	4
Թեմա 12. Բաց տնտեսությունը: Կապիտալի միջազգային հոսքերը և առևտրային հաշվեկշիռը: Վճարային հաշվեկշիռը: Փոքր, բաց տնտեսության մոդելը: Տնտեսական քաղաքականության ազդեցությունը փոքր, բաց տնտեսության վրա	4	4
Թեմա 13. Արժույթային շուկան: Հիմնական հասկացություններ: Ազգային արժույթի անվանական փոխանակային կուրսը և իրական փոխանակային կուրսը: Մակրոտնտեսական քաղաքականության ազդեցությունը փոքր, բաց տնտեսության հավասարակշռված իրական փոխանակային կուրսի վրա	4	4
Թեմա 14. Փոքր, բաց տնտեսության Մանդել-Ֆլեմինգի մոդելը: Տնտեսությունը կարճաժամկետում: Մանդել-Ֆլեմինգի մոդելը փոփոխվող գներով՝ որպես ամբողջական պահանջարկի տեսություն: Կարճաժամկետ և երկարաժամկետ հավասարակշռությունը փոքր, բաց տնտեսությունում	6	6
<i>Ընդամենը</i>	96 (ժամ)	

Դասընթացի թեմաների բովանդակությունն ըստ դասախոսության ծրագրի

Թեմա 1. Մակրոտնտեսագիտության զարգացումը, ծագումը: Մակրոտնտեսագիտության ուսումնասիրության օբյեկտը, առարկան: Ի՞նչ հարցերի է պատասխանում:

Դասախոսության ծրագիրը: Տնտեսագիտության սկզբունքները: Մակրոտնտեսագիտության զարգացումը: Դասական և քեյնսյան դպրոցների կանխադրույթները: Մոնետարիզմի բովանդակությունը: Շուկայական տնտեսության ինքնակարգավորման մեխանիզմը: Շուկայական իրավիճակներն ըստ մրցակցության բնույթի: Պարբերաշրջանայնությունը (ցիկլայնություն): Մակրոտնտեսագիտության ծագումը: Մոնետարիստներ: Նորքեյնսյան և Նորդասկան մոտեցումներ: Կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածների տարանջատումը: Մակրոտնտեսագիտության ուսումնասիրության օբյեկտը, առարկան: Պոզիտիվ և նորմատիվ մակրոտնտեսագիտությունը: Ի՞նչ հարցերի է պատասխանում մակրոտնտեսագիտությունը, կապը մյուս գիտությունների հետ:

Տնտեսագիտությունը (Էկոնոմիկս) գիտություն է այն մասին, թե ինչպես է հասարակությունը կառավարում իր սահմանափակ ռեսուրսները, փորձում դրանք նվազագույն ծախսերով վերածել բարիքների և բավարարել անընդհատ աճող պահանջմունքները (ի՞նչ, ինչպե՞ս և ո՞ւմ համար արտադրել): Այս պայմաններում խնդիր է առաջանում ուսումնասիրել անհատների որոշումներ կայացնելու գործընթացը (որքան աշխատել, ինչ գնել, ինչ խնայողություններ կատարել, որտեղ ներդնել), գնորդների և վաճառողների միջև փոխհարաբերությունները, վերլուծել այն գործոններն ու միտումները, որոնք ազդում են տնտեսության վրա որպես մեկ ամբողջություն:

Մակրոտնտեսագիտության զարգացումը: Դասական դպրոցի կանխադրույթները (18-րդ դար): Արդյունաբերական հեղաշրջումը:

Տնտեսական աճի և բաշխման հարցերը: Պատկերացումներ շուկաների վերաբերյալ: Ադամ Սմիթի՝ «Ազգերի հարստության պատճառների և բնույթի հետազոտություն», աշխատությունը (1776թ.): Տնտեսագիտությունը գիտություն է հարստության ստեղծման մասին: Վերարտադրության փուլերը (արտադրություն, բաշխում, փոխանակում, սպառում): Աշխատանքի բաժանումը և մասնագիտացումը: Տեխնոլոգիական առաջընթացը: Կապիտալի կուտակումը: Շուկայի ինքնակարգավորման մեխանիզմը՝ «Անտեսանելի ձեռք»: Տնտեսական գործունեության կարգավորման հիմնական գործիքը շուկայական գներն են, որոնց տատանումը հանգեցնում է ցանկալի շուկայական արդյունքների: Տնտեսական հաջողություններ արձանագրելու համար պետք է տնտեսությունը կարգավորել: Laissez-faire սկզբունքը: Սեյի օրենքը: Փողի քանակության ազդեցությունը գների մակարդակի վրա:

Գործարար ակտիվության պարբերական տատանումները, անկումները (19-րդ դարի վերջ 20-րդ դարի սկիզբ): Հավաքագրված տնտեսական ցուցանիշները (բնութագրիչներ):

1929-1933թթ. Մեծ դեպրեսիայի պատճառները, հետևանքները: Զ.Մ. Քեյնսի՝ «Զբաղվածության, փողի և տոկոսի ընդհանուր տեսություն», աշխատությունը (1936թ.): Ամբողջական պահանջարկը, տոկոսադրույքի իջեցումը, պետական գնումները, ֆիսկալ քաղաքականության կարևորությունը: Մակրոէկոնոմիկայի ծագումը: «Անտեսանելի ձեռքը» ուժեղ է, սակայն ոչ ամենակարող, այն հաջողություններ է արձանագրում այն ժամանակ, երբ կառավարությունները պաշտպանում և աջակցում են շուկայական տնտեսության սահուն գործակցության անհրաժեշտ կանոններին (օրինակ՝ մասնավոր սեփականության իրավունքի պաշտպանություն): Շուկան հաճախ արդյունավետ կորորինացնում է տնտեսական գործունեության կազմակերպումը, սակայն կան ազդեցության արտաքին էֆեկտներ (էքստերնալներ), որոնք առաջացնում են պետության կողմից տնտեսական ճիշտ քաղաքականության իրականացման

անհրաժեշտություն և տնտեսական արդյունավետության բարձրացում: Շուկայական իրավիճակներն ըստ մրցակցության բնույթի: Շուկայի անկատարությունը (ֆիասկո): Իրավիճակ, որում շուկան ինքն իրենով չի կարողանում լուծել ռեսուրսների արդյունավետ բաշխման հարցը: Մակրոտնտեսական հավասարակշռությունը հաստատվում է կատարյալ մրցակցության, ընդհանուր տեղեկատվության հասանելիության (ռացիոնալ սպասումների) և էքստերնալների բացակայության դեպքում: Պետության միջամտությունը տնտեսական կյանքին արդարացվում է, երբ այն ուղղվում է տնտեսական էֆեկտիվության և սոցիալական հավասարության ապահովմանը: Երբ կառավարության ծրագրերի հիմնական նպատակը կա՛մ տնտեսական «կարկանդակի» մեծացումն է, կա՛մ «կարկանդակը» բաժանելու ուղիների փոփոխությունը:

Մոնետարիզմի բովանդակությունը (Մ. Ֆրիդման, 1970-ական թթ.): Պետության միջամտությունն անհրաժեշտություն է միայն դրամաշրջանառության կարգավորման ոլորտում: Պետությունը պետք է ապահովի փողի առաջարկի կայուն աճ: Ակտիվ տնտեսական քաղաքականության դեմ փաստարկները: Դասական և քեյնսյան մոտեցումների Նորդասական սինթեզը: Ոչ միայն ամբողջական պահանջարկի, այլև ամբողջական առաջարկի շեշտադրումը: Կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածների տարանջատումն ունի ոչ թե քանակական, այլ որակական բովանդակություն: Ակտիվ տնտեսական քաղաքականությունը կարճաժամկետում: Խնդիրները երկարաժամկետում:

Տնտեսական համակարգի գործունեությունը, կառավարումը, զարգացումը տեղի են ունենում տարբեր մակարդակներում՝ միկրո, մեզո, մակրո, մեգա: Միկրոմակարդակում քննարկվում են տնտեսության առանձին շուկաները (մեկ առանձնացված շուկայի ակտիվություն, առաջարկի և պահանջարկի մասնակի հավասարակշռություն), ընդհանուր հավասարակշռությունը (հայացք բոլոր շուկաներին միաժամանակ, բոլոր շուկաների ակտիվություն, և՛ շուկանե-

րում տեղի ունեցող փոփոխությունների, և՛ նրանց փոխազդեցությունների ուսումնասիրություններ) և շուկայի գործակալների վարքագիծը (տնային տնտեսություններ, տնտեսվարողներ): Կարևորվում են անհատների կողմից որոշումների ընդունման և անհատների միջև փոխհարաբերությունների գործընթացները:

Իսկ թե ինչպես է գործում տնտեսական համակարգը որպես մեկ ամբողջություն՝ ազդեցացված (համախմբված) ձևով, ուսումնասիրում է մակրոէկոնոմիկան: Մակրոէկոնոմիկան ուսումնասիրում և վերլուծում է տնտեսական համակարգի գործունակությունը, դրա զարգացումը, ընդհանուր որոշումների ընդունման գործընթացը: Մակրոէկոնոմիկան գիտություն է մասշտաբների մասին: Պոզիտիվ մակրոէկոնոմիկան (ինչպե՞ս են ընթանում գործընթացներն իրականում, օրինաչափությունների և գործընթացների բացատրություն): Նորմատիվ մակրոէկոնոմիկան (ինչպե՞ս պետք է լինի, նախատեսվում է որոշակի մակրոտնտեսական քաղաքականություն): Յուրաքանչյուր տնտեսական գործիքի մշակում պետք է բխի նպատակից՝ ո՞ւմ ենք ցանկանում օգնել, ինչպե՞ս և որքա՞ն:

Մակրոտնտեսագիտության ուսումնասիրության օբյեկտը շուկայական տնտեսությունն է որպես մեկ ամբողջություն, կամ մեկ միասնական համակարգ, իսկ հիմնական առարկան շուկայական տնտեսության բոլոր սուբյեկտների համատեղ գործունեությունն է և այդ գործունեությունն ամփոփող արդյունքները: Մակրոէկոնոմիկան հետազոտում է մակրոտնտեսական քաղաքականության նպատակահարմարությունը, հնարավորություններն ու արդյունավետությունը:

Մակրոտնտեսագիտության ուսումնասիրության առարկան այն գործոններն են, որոնք որոշում են ամբողջական եկամուտը, տնտեսական աճը, գործազրկության մակարդակը, գնաճը, փոխանակային կուրսերի դինամիկան, վճարային հաշվեկշռի վիճակը: Մակրոէկոնոմիկան ուսումնասիրում է տնտեսության կառուցվածքը, զարգացումը և որոշումների ընդունման ընդհանուր գործընթացը:

Մակրոտնտեսագիտության կողմից ուսումնասիրվող և լուծվող

հիմնահարցերի շրջանակը առնչվում է շուկայական տնտեսության բոլոր սուբյեկտներին և մակրոտնտեսական շուկաներին: Օրինակ՝ ինչո՞ւ են այս տարի անցյալ տարվա համեմատ, գներն աճել ավելի արագ: Ինչո՞ւ է զարգացած երկրներում տնտեսական աճի տեմպը համեմատաբար ցածր զարգացող երկրների աճի տեմպից, իսկ կենսամակարդակը բարձր զարգացող երկրների կենսամակարդակից: Ինչպե՞ս բարձրացնել կենսամակարդակը: Ինչո՞ւ են տնտեսությունները զարգանում ցիկլայնորեն: Որո՞նք են գործազրկության բարձր մակարդակի պատճառները: Ինչո՞վ են բացատրվում գործարար ակտիվության անկումները, և հնարավոր է արդյո՞ք դրանցից խուսափել: Ինչո՞ւ է ազգային արժույթի արժեզրկումը մեծացնում հայրենական ապրանքների նկատմամբ արտաքին պահանջարկը և բարձրացնում երկրի մրցունակությունը համաշխարհային շուկայում, իսկ արտարժույթի թանկացումը ուղեկցվում օտարերկրյա կապիտալի ներհոսքով դեպի երկիր:

1970-թվականներից մակրէկոնոմիկայում ամրապնդվեցին միկրոտնտեսական հիմքերը: Կարևորվեց շուկայի մասին անկատար տեղեկատվության (ասիմետրիկ տեղեկատվություն կամ տեղեկատվական ասիմետրիաներ) և դրանով պայմանավորված իռացիոնալ վարքագծի, վատատեսական սպասումների, անկատար մրցակցության ազդեցությունները տնտեսության մակրոտնտեսական իրավիճակի, հավասարակշռության հաստատման վրա: Ժամանակի ընթացքում՝ տեղեկատվության հասանելիության ապահովման պայմաններում, գործակալները ռացիոնալ են դառնում, ինչն էլ նպաստում է մակրոտնտեսական կայունությանը:

Սպասումները ռացիոնալ են, եթե անհատն ունի ամբողջական տեղեկատվություն ժամանակի տվյալ պահի վերաբերյալ և ամբողջությամբ այն օգտագործում է օպտիմալ որոշում ընդունելու համար: Քանի որ ժամանակի յուրաքանչյուր պահի սպառողները որոշումներ են կայացնում սպառման վերաբերյալ՝ հիմք ընդունելով ընթացիկ սպասումները՝ հիմնված պերմանենտ (մշտական) եկամուտներ-

րի վրա, ապա միայն արտաքին գործոնների ազդեցությամբ, սպասումների փոփոխությունը կարող է հանգեցնել սպառման փոփոխության: Տնտեսական որոշումների ընդունումը պայմանավորված է նաև անհատների հոգեբանական առանձնահատկություններով, որոնք ազդում են նրանց վարքագծի և տնտեսական փոփոխականների վրա:

Ընդհանուր տնտեսական հավասարակշռության տեսությունն այստեղ օգտագործվում է բացատրելու համար տնտեսության լայն ազդեցատները (օրինակ՝ ազգային արդյունք, համախառն սպառում, համախառն ներդրումներ, գնաճ և այլն): Միաժամանակ դիտարկվում են առանձին մակրոտնտեսական շուկաները և՛ շուկաներում տեղի ունեցող փոփոխություններն ու փոխազդեցությունները: Մակրոտնտեսագիտությունը պատասխանում է մի շատ կարևոր հարցի՝ պետք է արդյո՞ք պետությունը միջամտի տնտեսական կյանքին, որպեսզի կանխի գործարար ակտիվության տատանումները և խուսափի տնտեսական ճգնաժամերից:

Թեմա 2. Մակրոտնտեսագիտության հիմնահարցերը, մեթոդաբանությունը: Մակրոտնտեսական վերլուծությունների ուղղությունները: Մակրոտնտեսական մոդելները

Դասախոսության ծրագիրը: Մակրոտնտեսագիտության հիմնահարցերը (մակրոտնտեսական քաղաքականության նպատակները): Մակրոտնտեսական երևույթների և քաղաքականության մշակման վերլուծության ուղղությունները: Մոզական քառանկյուն: Մակրոտնտեսական վերլուծության մեթոդները: Մակրոտնտեսական մոդելները: Մոդելների արտահայտման ձևերը, կիրառման նպատակահարմարությունը: Մոդելներում օգտագործվող փոփոխականները: Էնդոգեն և էկզոգեն փոփոխականներ: Քանակական փոփոխականները: Պաշարներ, հոսքեր: Մակրոտնտեսական փոփոխականների միջև փոխադարձ կապերը: Ճկուն և ոչ ճկուն գներ: Շուկայական տնտեսության

սուբյեկտները (գործող անձիք): Մակրոտնտեսական շուկաները (գործողությունների վայր): Շրջանաձև հոսքերի մոդելը (ծախսերի և եկամուտների շրջապտույտի մոդել):

Մակրոտնտեսագիտության հիմնահարցերը. կենսամակարդակի բարձրացում, տնտեսական աճ (ի՞նչ, ինչպե՞ս և ո՞ւմ համար արտադրել), տնտեսական ցիկլեր (գործարար ցիկլեր, իրական ՀՆԱ փոփոխություններ), գործազրկություն, գնաճ, կայուն զարգացում (շրջակա միջավայրի պահպանություն, բնակլիմայական փոփոխությունների կայունություն), տնտեսությունների աճող փոխկապվածություններ (շուկաների գլոբալացում):

Մակրոտնտեսական երևույթների վերլուծությունը իրականացվում է 4 ուղղությամբ («մոզական քառանկյուն»).

- տնտեսական աճի պարբերաշրջանների վերլուծություն,
- զբաղվածության մակարդակի վերլուծություն,
- գների մակարդակի վերլուծություն,
- վճարային հաշվեկշռի վերլուծություն:

Մակրոտնտեսագիտությունը տնտեսական քաղաքականության ձևավորման գործիք է, որը վեր է հանում տնտեսության զարգացման այն ռազմավարական խնդիրներն ու հիմնահարցերը, որոնք բխում են երկրի տնտեսական զարգացման տվյալ փուլի նպատակից և պետք է դրվեն տնտեսական քաղաքականության հիմքում: Այս համատեքստում կարևորվում է կայուն տնտեսական աճի, ռեսուրսների լրիվ զբաղվածության, կայուն գնաճի (չափավոր գնաճ), վճարային հաշվեկշռի հավասարակշռության ապահովումը՝ հարկաբյուջետային (ֆիսկալ), դրամավարկային (մոնետար) քաղաքականությունների միջոցով:

Տնտեսական քաղաքականություն մշակելիս մակրոտնտեսական վերլուծությունն իրականացվում է հետևյալ ուղղություններով.

- տնտեսական իրավիճակի վերլուծություն,
- նպատակների վերլուծություն,
- տնտեսական համակարգի շահերի համապատասխանության վերլուծություն,

- պետական կարգավորման գործիքների կիրառելիության վերլուծություն:

Մակրոտնտեսագիտության կողմից օգտագործվող գիտական ճանաչողության ընդհանուր մեթոդները. ինդուկցիայի և դեդուկցիայի, գիտական վերացարկման (աբստրահման), համակարգային վերլուծության (որակական, քանակական), դինամիկ հետազոտության, համեմատական, մաթեմատիկական, վիճակագրական:

Մակրոտնտեսագիտության հիմնական մեթոդները. ագրեգավորման, աբստրահման, մակրոտնտեսական մոդելավորման, հաշվեկշռային, նորմատիվային, ծրագրանպատակային: Ագրեգավորման մեթոդը առանձնահատուկ է, այն հնարավորություն է տալիս մակրոտնտեսական վերլուծություններում օգտագործել ագրեգավորված (համախմբված) մեծություններ, որոնք բնութագրում են տընտեսությունը որպես մեկ ամբողջություն (<ՆԱ, գների միջին մակարդակ, շուկայական տոկոսադրույք, գնաճ, զբաղվածության մակարդակ, գործազրկության մակարդակ):

Մակրոտնտեսական մոդելները մակրոտնտեսական երևույթների և գործընթացների ֆունկցիոնալ փոխկապվածությունների ձևականացված (տրամաբանական, գրաֆիկական, հանրահաշվական) նկարագրություններ են, իրականության համեմատաբար պարզեցված, ընդհանրացված արտացոլանքը (տնտեսության վարքագիծն ուսումնասիրելիս հնարավոր չէ բոլոր բազմաշերտ դետալները միաժամանակ նկատի ունենալ, մոդելների արդյունքները հեշտացնում են մակրոտնտեսական քաղաքականության մշակման գործընթացը): Օպտիմալացման, հավասարակշռության և ըստ այդմ վերլուծական, կանխատեսման, կիրառական և այլ մոդելները: Մակրոտնտեսական մոդելներում դիտարկվում են էմպիրիկ օրինաչափություններ. առաջ է քաշվում վարկած, ընտրվում են էնդոգեն (ներծին) և էկզոգեն (արտածին) տնտեսական փոփոխականներ, կառուցվում է մոդելը, արտաքին գործոնների փոփոխության պայմաններում կատարվում են եզրահանգումներ, ստացված արդյունքները համաձայնեցվում են դիտարկումների հետ և ձեռք են բերում

կիրառական նշանակություն (օգտագործվում են մակրոտնտեսական քաղաքականություն մշակելիս): Մակրոտնտեսական հոսքային և պաշարային ցուցանիշները: Հոսքային ցուցանիշները չափվում են որպես դիտարկվող ցուցանիշի քանակություն ժամանակի միավորի ընթացքում (օրինակ՝ մեկ ամիս, եռամսյակ, տարի), արտահայտում են դինամիկ փոփոխություն (ՀՆԱ ծավալ, ներդրումների ծավալ, բյուջեի պակասուրդ՝ չափվում են դրամական միավորներով, աշխատանք կորցնողների թիվ, գնաճ՝ չափվում է տոկոսներով): Պաշարային ցուցանիշները չափվում են որպես դիտարկվող ցուցանիշի քանակություն ժամանակի որոշակի, կոնկրետ պահին (փողի առաջարկ, կապիտալի պաշար, գործազուրկների թիվ, բնակչության թվաքանակ, գործազրկության մակարդակ, պետական պարտք): Հոսքերի մեծությունները հնարավորություն են տալիս արագ հաշվարկելու պաշարների մեծությունը, իսկ պաշարները երկրի տնտեսական վիճակի գնահատման մեծություններ են: Ջրավազանում առկա ջուրը տվյալ պահին պաշար է, իսկ միավոր ժամանակատվածում դրա մեջ լցվող ջուրը՝ հոսք: Օրինակ՝ մեկ ժամվա ընթացքում ջրավազան լցվող ջրի հոսքը մեկ ժամում ջրավազան լցվող ջրի քանակության և այդ մեկ ժամում ջրավազանից դուրս եկող ջրի քանակության տարբերությունն է: Հոսքը պաշարի փոփոխությունն է ժամանակի ընթացքում: Ճկուն և ոչ ճկուն գները: Մակրոտնտեսական մոդելների հիմնական ենթադրություններից մեկը (շուկայում ստեղծված պայմաններին համապատասխան) գների և աշխատավարձերի փոփոխություններն են: Ապրանքների և ծառայությունների գները փոփոխվում են պահանջարկի ու առաջարկի հավասարակշռմանը համապատասխան (շուկայի հավասարակշռեցում): Որպեսզի շուկաներում հավասարակշռությունը մշտապես պահպանվի, գները պետք է մշտապես փոփոխվեն՝ արձագանքելով առաջարկի ու պահանջարկի փոփոխություններին: Իրականում զգալի թվով ապրանքների գներ և աշխատավարձեր ճկուն չեն: Գների ճկունության ենթադրությունը վերաբերում է երկարաժամ-

կետ երևույթների ուսումնասիրություններին (տասնամյակների իրար հաջորդող տնտեսական աճ): Կարճաժամկետում տնտեսության ուսումնասիրության համար առավել կիրառելի է գների ոչ ճկուն լինելու ենթադրությունը (ամենամյա տնտեսական տատանումներ): Շուկայական տնտեսության սուբյեկտները (գործող անձիք) մակրոմակարդակում: Տնային տնտեսությունները, կազմակերպությունները, պետությունը, արտաքին աշխարհը: Մակրոտնտեսական շուկաները (գործողությունների վայր): Ապրանքների և ծառայությունների շուկան: Խնայողությունների և ներդրումների (ֆինանսական կամ կապիտալի) շուկան: Աշխատանքի շուկան: Փողի շուկան: Շրջանաձև հոսքերի մոդելը (<ՆԱ-ի, ծախսերի և եկամուտների շրջապտույտի մոդել) փակ և բաց տնտեսություններում: Շրջանաձև հոսքերի բաց տնտեսության մոդելում դիտարկվում են փոխազդեցություններ արտադրության գործոնների (տնտեսական շրջանառության մեջ ընդգրկված տնտեսական ռեսուրսներ), ֆինանսական և բարիքների շուկաների ու կազմակերպությունների, պետության, տնային տնտեսությունների և արտաքին աշխարհի միջև: Շրջանաձև հոսքերի մոդելի հիմնական եզրակացությունը: Համախառն ծախսերը խթանում են զբաղվածության, թողարկման և եկամուտների աճը, այդ եկամուտներից նորից ֆինանսավորվում են տնտեսական սուբյեկտների ծախսերը, որոնք եկամուտների տեսքով վերադառնում են արտադրության գործոնների սեփականատերերին: Պատճառը և հետևանքը փոխում են իրենց տեղերը, շրջանաձև հոսքերի մոդելը ընդունում է շրջապտույտի տեսք, որը հիմք է հանդիսանում արտադրության արդյունքը՝ <ՆԱ-ն, 3 եղանակով հաշվելու համար: Եթե ամբողջական պահանջարկը որոշող ամբողջական ծախսերը կրճատվում են, ապա զբաղվածության և թողարկման համախառն ծավալը կրճատվում է, որը նվազեցնում է համախառն եկամուտները, որոնք էլ իրենց հերթին որոշում են ամբողջական պահանջարկը: Մակրոտնտեսական քաղաքականության կարևոր խնդիր է դառնում ամբողջական պահանջարկի կայունացումը:

**Թեմա 3. Տնտեսական գործունեության արդյունքների չափումը:
Մակրոտնտեսական ցուցանիշների հաշվարկման մեթոդները**

Դասախոսության ծրագիրը: Ազգային հաշիվների համակարգը: Մակրոտնտեսական ցուցանիշներին ներկայացվող պահանջները: Մակրոտնտեսական չորս խումբ ցուցանիշները: ՀՆԱ-ն (անվանական, իրական, փաստացի): Ներուժային ՀՆԱ-ն (ռեսուրսների լրիվ զբաղվածություն): ՀԱԱ-ն: ՋՆԱ-ն, ԱԵ-ն, անձնական եկամուտը, անձնական տնօրինվող եկամուտը: Համախառն ներքին արդյունքի հաշվարկման կանոնները, մեթոդները: Մակրոտնտեսական հիմնական նույնությունը: Զբաղվածության մակարդակն արտահայտող ցուցանիշները: Կենսամակարդակը բնութագրող ցուցանիշները: Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն (անվանական, իրական): Գնողունակության համարժեքությունը: Գնային ինդեքսները: ՀՆԱ-ի դեֆլյատորի և սպառողական գների ինդեքսի հաշվարկման կարգը, առանձնահատկությունները: Գնաճի չափումն ըստ ինդեքսների: Բնականոն գնաճը:

Ժամանակակից տնտեսական վիճակագրությունը մակրոտնտեսագետին տրամադրում է մակրոտնտեսական ցուցանիշների (ազգային եկամուտ, ներդրումներ, սպառում, արտահանում ու ներմուծում, զբաղվածության և գործազրկության մակարդակներ, փողի զանգված, գնաճ, տոկոսադրույք) հետ կապված ծավալուն տվյալների բազա: Ազգային հաշիվների համակարգը: «ՀՆԱ» հասկացությունը առաջարկվել է 1934թ. ԱՄՆ տնտեսական հետազոտությունների ազգային բյուրոյի աշխատակից Սայմոն Կուզնեցի կողմից, որը 1971թ. դարձավ տնտեսագիտության գծով Նոբելյան մրցանակակիր: Ցուցանիշների համակարգ ստեղծելը՝ որը կնկարագրեր տնտեսությունում առանձին ճյուղերի թողարկումը, ընդհանուր թողարկումը, եկամուտներն ու ծախսերը, հնարավոր դարձավ տնտեսագետ Վասիլի Լեոնտևի (1973թ. տնտեսագիտության գծով Նոբելյան մրցանակակիր), աշխատանքների, մասնավորապես 1936թ. մշակած «Միջճյուղային հաշվեկշիռ» մոդելի, շնորհիվ: Այս մոդելի և

կրկնակի գրանցման բացառման սկզբունքի հիման վրա՝ Ջոն Քեյնսի հանձնարարությամբ, բրիտանացի տնտեսագետներ Ռիչարդ Սթոունը և Ջոն Միդը ստեղծեցին ազգային հաշիվների համակարգի առաջին աշխատանքային մոդելը, որը հետագայում՝ 1953թ., դրվեց ԱՀՀ-ի առաջին տարբերակի հիմքում և ՄԱԿ-ի վիճակագրության հանձնաժողովի կողմից առաջարկվեց միջազգային օգտագործման: ԱՀՀ-ի վերանայված վերջին տարբերակը միջազգային վիճակագրության մեջ ներդրվել է 2008թ.: Հիմքում դրված է արտադրության հաշվառումը: Ազգային հաշիվների համակարգը տընտեսությունում մակրոտնտեսական գործընթացների նկարագրման և վերլուծության համար կիրառվող փոխկապակցված ցուցանիշների համակարգ է: Մակրոտնտեսական ցուցանիշներին ներկայացվող պահանջները: Համախառն ներքին արդյունքը որոշակի ժամանակահատվածում (սովորաբար մեկ տարում) երկրի տնտեսական տարածքում արտադրված վերջնական սպառման ապրանքների և ծառայությունների ընթացիկ շուկայական արժեքների գումարն է: ՀՆԱ-ն (անվանական, իրական, փաստացի): Ներուժային ՀՆԱ-ն (տնտեսական ներուժ) արտադրվում է ռեսուրսների լրիվ զբաղվածության պայմաններում, որը ենթադրում է պարապուրդի մեջ զբաղվող արտադրական հզորություններ 10-20%-ի չափով և գործազրության 6,5-7,5% մակարդակ (բնական մակարդակ): ՀՆԱ հաշվարկման կանոնները (օգտագործված և նախկինում արտադրված ապրանքները ՀՆԱ-ում հաշվի չեն առնվում, ժամանակահատվածի վերջում չվաճառված ապրանքները հաշվի են առնվում, եթե դրանք հնարավոր է պահպանել կամ պահուստավորել (ներդրումներ պաշարներում), միջանկյալ ապրանքները հաշվի չեն առնվում, շուկայից դուրս արտադրված որոշ ապրանքներ՝ չունենալով շուկայական արժեք, այնուամենայնիվ, ստանում են որոշակի արժեք (պայմանական հավելադիր արժեք): ՀՆԱ-ի հաշվարկման մեթոդները: Եկամուտների օգտագործման մեթոդը (ըստ ծախսերի): Մակրոտնտեսական հիմնական նույնությունը ($Y=C+I+G+Nx$): Եկամուտների ձևավորման մեթոդը (ըստ եկամտի աղբյուրների): Արտադրական

եղանակը (ըստ ավելացված արժեքի): Ամորտիզացիան: Ջուտ ներքին արդյունքը (ՋՆԱ): ՀԱԱ-ի հաշվարկման մեթոդիկան: ՀՆԱ-ն դիտարկվող ժամանակաշրջանում գնահատում է տնտեսական գործունեությունը տվյալ երկրի տնտեսական տարածքում, իսկ ՀԱԱ-ն գնահատում է տվյալ երկրի ռեզիդենտների տնտեսական գործունեությունն անկախ նրանից, թե որ երկրի տնտեսական տարածքում են նրանք արտադրել ապրանքներ ու ծառայություններ: Ջուտ անուղղակի հարկերը, ԱԵ-ն, անձնական եկամուտը, անձնական տնօրինվող եկամուտը: 1 շնչի հաշվով ՀՆԱ-ն: Կենսամակարդակի միջերկրային համեմատություններ անցկացնելիս օգտագործվում է 1 շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշն ըստ գնողունակության համարժեքության (purchasing power parity, PPP), որը թույլ է տալիս հաշվի առնել ազգային դրամական միավորների գնողունակության տարբերությունները: Երկու տարբեր երկրներ կարող են ունենալ բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի նույն ցուցանիշը, բայց գների տարբեր մակարդակներ, ինչը նշանակում է, որ եկամտի մեկ դոլարով այդ երկրներում հնարավոր է գնել բարիքների տարբեր քանակություններ: Գների մակարդակի փոփոխությունների գնահատումը: Գնային ինդեքսները: ՀՆԱ դեֆլյատորի և սպառողական գների ինդեքսի (ՍԳԻ) առանձնահատկություններն ու տարբերությունները: Իրական ՀՆԱ-ն կարելի է հաշվարկել անվանական ՀՆԱ-ն ՀՆԱ դեֆլյատորով ճշգրտելու միջոցով: ՀՆԱ դեֆլյատորը ցույց է տալիս տնտեսությունում գների ընդհանուր մակարդակի փոփոխությունը: Սպառողական զամբյուղի արժեքի փոփոխությունները (ՍԳԻ): Գնաճի չափումը: Գնային ինդեքսների հավելաճերի տեմպերը: Գնաճն ըստ ՍԳԻ-ի (12 ամսյա գնաճ): Գնաճն ըստ դեֆլյատորի: Բնականոն գնաճի հաշվարկը հիմնականում դրամավարկային գործոններով պայմանավորված գնաճ՝ զերծ է որոշ ապրանքների և ծառայությունների սեզոնայնությունից, առաջարկի և պահանջարկի ժամանակավոր ցնցումներից, ինչպես նաև այլ անկանխատեսելի գործոնների ազդեցությունից:

Թեմա 4. Ազգային արդյունքի արտադրությունը, բաշխումը, օգտագործման ուղղությունները: Արտադրության գործոնները և ամբողջական առաջարկը: Կոր-Դուզլասի արտադրական ֆունկցիան

Դասախոսության ծրագիրը: Ներկայացուցչական կամ տիպիկ գործակալը (սպառող, արտադրող): Արտադրության գործոնները և ամբողջական առաջարկը երկարաժամկետում: Արտադրական ֆունկցիան: Կայուն հատույց մասշտաբից հատկությունը: Աշխատանքի և կապիտալի սահմանային արդյունքները: Նվազող սահմանային արդյունքի հատկությունը: Աշխատանքի սահմանային արդյունքից դեպի աշխատանքի պահանջարկ: Կապիտալի սահմանային արդյունքից դեպի կապիտալի պահանջարկ: Ամբողջական եկամտի բաշխումն ըստ արտադրության գործոնների իրական գների: Շահույթը մակրոմակարդակում: Տնտեսական և հաշվապահական շահույթ: Կոր-Դուզլասի արտադրական ֆունկցիան և հատկությունները: Պահանջարկը ապրանքների և ծառայությունների նկատմամբ: ՀՆԱ-ի ծախսային բաղադրիչները բաց և փակ տնտեսություններում:

Բազային մակրոտնտեսագիտությունը կառուցվում է «ներկայացուցչական կամ տիպիկ գործակալ» (սպառող, արտադրող) հասկացության հիմքով: Ներկայացուցչական գործակալների գաղափարը սերում է դասական դպրոցի ավանդույթներից. մասնակից (առանձին մարդ կամ ձեռնարկություն) ընդհանուրին (բոլոր մարդիկ կամ բոլոր ձեռնարկությունները) անցնելը, ընդհանուրն ունի նույն հատկանիշները, ինչ մասնակին: Քննարկվում են իրական ցուցանիշներ:

Տիպիկ սպառողը, սպառողական ապրանքներ ձեռք բերող ընդհանրացված տնտեսական գործակալ է: Իրենց նախապիրություններով միանման ո թվով սպառողների դեպքում մաթեմատիկորեն հնարավոր է ցույց տալ, որ տիպիկ սպառողի վարքը համար-

ժեք կլինի n թվով առանձին միանման գործակալների (սպառողների) վարքին:

Տիպիկ սպառողը մակրոմակարդակում արտադրության 2 հիմնական գործոնների (աշխատանք – L , կապիտալ – K) սեփականատեր է, ձգտում է առավելագույնս բավարարել իր պահանջմունքները, ձևավորում է աշխատանքի առաջարկը, ստանում է տնտեսության ամբողջ եկամուտը որպես աշխատանքի սեփականատեր և որպես կապիտալի սեփականատեր վճարում է բոլոր զուտ հարկերը, քանի որ տիրապետում է արտադրության բոլոր գործոններին և իր կողմից տնօրինվող եկամուտը օգտագործում է սպառման ու խնայողությունների համար:

Տիպիկ արտադրողը տնտեսությունում բոլոր ապրանքների արտադրությունն իրականացնող ընդհանարացված տնտեսական գործակալ է: n թվով միանման ֆիրմաների դեպքում մաթեմատիկորեն հնարավոր է ցույց տալ, որ տիպիկ արտադրողի վարքը համարժեք կլինի n թվով առանձին միանման գործակալների (ֆիրմաների) վարքին:

Տիպիկ արտադրողը մակրոմակարդակում ներկայացնում է պահանջարկ 2 հիմնական գործոնների (աշխատանք – L , կապիտալ – K) համար, ձգտում է առավելագույն շահույթի, ձևավորում է աշխատանքի պահանջարկն ու ներդրումային պահանջարկը, տալիս է արտադրանք, արտադրությունից ստացված ողջ եկամուտը վճարում է արտադրության գործոնների սեփականատերերին (տիպիկ սպառողներին): Ի՞նչն է որոշում տնտեսությունում ընդհանուր թողարկման ծավալը (ապրանքների և ծառայությունների ամբողջական առաջարկը): Արտադրական գործընթացում օգտագործվող տնտեսական ռեսուրսների քանակությունը (արտադրության գործոններ) և դրանք արդյունք դարձնելու եղանակը՝ արտադրական ֆունկցիան ($Y=F(K, L)$), ենթադրվում է տնտեսությունում լրիվ զբաղվածություն: Արտացոլում է երկրում տվյալ պահին գոյություն ունեցող կապիտալի և աշխատանքի միացման տեխնոլոգիան: Տվյալ պահին գոյություն ունեցող արտադրական տեխնոլոգիան որոշում

է, թե ինչպիսի ծավալ է արտադրվում կապիտալի և աշխատանքի տվյալ քանակների դեպքում (տրված K, L, Y): Ժամանակի ընթացքում արտադրվող արտադրանքի ծավալը փոխվում է այն չափով, որքանով փոխվում է արտադրական գործոնների առաջարկը կամ արտադրության տեխնոլոգիան: Որքան ավելի է կապիտալի քանակը կամ աշխատանքի քանակը, այնքան ավելի մեծ է թողարկվող արտադրանքի ծավալը: Որքան ավելի լավն է գոյություն ունեցող արտադրական ֆունկցիայով արտահայտված տեխնոլոգիան, այնքան ավելի մեծ է արտադրանքի ծավալը:

Արտադրական ֆունկցիայի հատկությունը: Բոլոր գործոնները նշանակալի են՝ ($F(0,0) = 0$; $F(K,0) = 0$; $F(0,L) = 0$): $q(tK,tL) > q(K,L)$:

Արտադրական ֆունկցիայի կայուն հատույց մասշտաբից հատկությունը՝ $ZY = F(ZK,ZL)$ կամ $F(ZK,ZL) = ZF(K,L)$, որտեղ $Z > 0$: Առկա է կայուն հատույց մասշտաբից, եթե կապիտալի և աշխատանքի միջին ամբողջական ծախսերի հարաբերությունը արտադրության ծավալին երկար ժամկետում մնում է անփոփոխ:

Առկա է աճող հատույց մասշտաբից (դրական էֆեկտ), եթե կապիտալի և աշխատանքի միջին ամբողջական ծախսերը երկար ժամկետում կրճատվում են արտադրության ծավալի աճին զուգընթաց՝ $F(ZK,ZL) > ZF(K,L), Z > 0$:

Առկա է նվազող հատույց մասշտաբից (բացասական էֆեկտ), եթե երկար ժամկետում միջին ամբողջական ծախսերն աճում են արտադրության ծավալի աճից ավելի արագ՝ $F(ZK,ZL) < ZF(K,L), Z > 0$:

Ամբողջական եկամուտը բաշխվում է ըստ արտադրության գործոնների իրական գների, այսինքն՝ յուրաքանչյուր գործոն ստանում է իր բաժինը՝ հավասար իր սահմանային արդյունքին: Տիպիկ ձեռնարկությանն անհրաժեշտ արտադրության գործոնի պահանջարկի որոշումը (R, W, P տրված են): Հասույթը (համախառն եկամուտ) = PY , որտեղ P -ն՝ արտադրանքի միավորի վաճառքի գինն է, Y -ը՝ արտադրության ծավալը: Շահույթը = $PY - WL - RK$, որտեղ WL -ը՝ աշխատանք գործոնի ձեռքբերման վրա կատարված ծախսերն է,

RK-ն՝ կապիտալ գործոնի ձեռքբերման վրա կատարված ծախսերը: Շահույթի կախվածությունը արտադրության գործոններից. Շահույթ= $PF(K,L)-WL-RK$: Աշխատանքի սահմանային արդյունքը՝ MPL, աշխատանքի լրացուցիչ միավորով ստեղծված արտադրանքի լրացուցիչ քանակությունն է, $MPL=F(K,L+1) - F(K,L)$: Ըստ արտադրական ֆունկցիաների նվազող սահմանային արդյունքի հատկության, եթե՝ K-ն անփոփոխ է, ապա յուրաքանչյուր հաջորդ լրացուցիչ աշխատող ավելի քիչ լրացուցիչ արդյունք է ստեղծում, քան նախորդը: Լրացուցիչ հասույթը = $MPL \times P$, Լրացուցիչ շահույթը = $MPL \times P - W$: Կապիտալի սահմանային արդյունքը՝ MPK, կապիտալի լրացուցիչ միավորով ստեղծված արտադրանքի լրացուցիչ քանակությունն է, $MPK=F(K+1,L) - F(K,L)$: Ըստ արտադրական ֆունկցիաների նվազող սահմանային արդյունքի հատկության, եթե L-ը անփոփոխ է, ապա կապիտալի յուրաքանչյուր հաջորդ լրացուցիչ միավոր ավելի քիչ լրացուցիչ արդյունք է ստեղծում, քան նախորդը: Լրացուցիչ հասույթը = $MPK \times P$, լրացուցիչ շահույթը = $MPK \times P - R$: Տիպիկ ձեռնարկությունը լրացուցիչ աշխատողներ է վարձում այնքան ժամանակ, քանի դեռ լրացուցիչ հասույթը չի հավասարվել աշխատանքի անվանական գնին ($MPL \times P = W$) կամ քանի դեռ աշխատանքի սահմանային արդյունքը չի հավասարվել իրական աշխատավարձին՝ $MPL = W/P$: Իրական աշխատավարձը կամ աշխատանքի իրական գինը (W/P): Տիպիկ ձեռնարկությունը կապիտալի լրացուցիչ միավոր է վարձում այնքան ժամանակ, քանի դեռ լրացուցիչ հասույթը չի հավասարվել կապիտալի անվանական գնին ($MPK \times P = R$) կամ քանի դեռ կապիտալի սահմանային արդյունքը չի հավասարվել կապիտալի միավորի իրական վարձավճարին՝ $MPK = R/P$: Կապիտալի միավորի իրական վարձավճարը կամ կապիտալի իրական գինը (R/P): Արտադրության գործոններից յուրաքանչյուրին բաժին է ընկնում այնքան արդյունք, որքան այն սահմանային արդյունք է ավելացնում թողարկվող արդյունքի ծավալին: $MPL \times L$ -ը ընդհանուր իրական ծախսերն է աշխատանքի վրա կամ աշխատողների ընդհանուր իրական եկամուտն է, $MPK \times K$ -ն ընդհանուր իրական ծախսերն

է կապիտալի վրա կամ կապիտալի սեփականատերերի ընդհանուր իրական եկամուտն է: Շահույթի բաշխումն արտադրության գործընթացի մասնակիցների միջև: Ամբողջական եկամուտը՝ Y -ը, հավասար է աշխատողների, կապիտալի սեփականատերերի, ձեռնարկությունների սեփականատերերի իրական եկամուտների գումարին: Արտադրության գործոնների ձեռքբերման վրա կատարված ընդհանուր իրական ծախսերը $= (MPK \times K) + (MPL \times L) =$ արտադրության գործոնների սեփականատերերի ստացած ընդհանուր իրական եկամուտների գումար: Շահույթը մակրոմակարդակում: Եթե արտադրական ֆունկցիան ունի կայուն հատույց մասշտաբից, ապա $Y = F(K, L) = MPK \times K + MPL \times L$: Իրական տնտեսական շահույթը $= Y - MPK \times K - MPL \times L = 0$: Հաշվապահական շահույթը $= MPK \times K$ (կապիտալի սեփականատերերի եկամուտ): Կոր-Դուգլասի արտադրական ֆունկցիա՝ $Y = AK^\alpha L^{1-\alpha}$: Ֆունկցիան ունի 3 հատկություն. 1. կայուն հատույց մասշտաբից՝ $zY = A (zK)^\alpha (zL)^{1-\alpha}$, 2. արտադրության գործոնների սահմանային արդյունքները ուղիղ համեմատական են դրանց միջին արտադրողականությանը (համամասնական են դրանց միջին արդյունքին), 3. արտադրության գործոնները ստանում են իրենց սահմանային արդյունքները, որոշիչ է α գործակիցը:

Աշխատանքի և կապիտալի սահմանային արդյունքները ստանալու համար $Y = AK^\alpha L^{1-\alpha}$ ֆունկցիան ածանցենք ըստ L -ի և K -ի՝ $MPL = (1 - \alpha) AK^\alpha L^{-\alpha} = (1 - \alpha) \frac{Y}{L}$, $MPK = \alpha AK^{\alpha-1} L^{1-\alpha} = \alpha \frac{Y}{K}$: Y/L -աշխատանքի միջին արտադրողականությունն է, Y/K -կապիտալի միջին արտադրողականությունը: Քանի որ $0 < \alpha < 1$ և կայուն է, ապա կապիտալի ավելացումը մեծացնում է MPL -ը և կրճատում MPK -ն, աշխատանքի ավելացումը մեծացնում է MPK -ն և կրճատում MPL -ը, A -ի (տեխնոլոգիական առաջադիմության ազդեցությունը ներկայացնող չափորոշիչ) ավելացումը համամասնորեն մեծացնում է 2 գործոնների սահմանային արդյունքները: Աշխատանքի վրա կատարված ընդհանուր իրական ծախսերը հավասար են՝ $MPL \times L = (1 - \alpha)Y$, կապիտալի վրա կատարվածը՝ $MPK \times K = \alpha Y$: $MPL \times L$ -աշխատող-

ների ընդհանուր իրական եկամուտ, $MPK \times K$ -կապիտալի սեփականատերերի ընդհանուր իրական եկամուտ: $(1 - \alpha)Y/\alpha Y = (1 - \alpha)/\alpha$, աշխատանքի և կապիտալի սեփականատերերի եկամուտների հարաբերությունը կայուն է (ինչը և հայտնաբերել էր Դուգլասը): Արտադրության գործոնների բաժինները կախված են միայն α -ից և կախված չեն n ՝ K -ից, n ՝ L -ից, n ՝ A -ից: $(1 - \alpha)$ -ն աշխատանքի բաժինն է ամբողջական եկամտում, իսկ α -ն կապիտալի բաժինն է ամբողջական եկամտում:

Մակրոմակարդակում շուկայական տնտեսության 4 հիմնական մասնակիցները (ՀՆԱ ծախսային բաղադրիչներ): Սպառողները (հիմնական ֆունկցիա – սպառման, C), արտադրողները (արտադրում են արդյունք, ինչպես նաև կատարում են ներդրումներ – I), պետությունը (հավաքում է հարկեր – T և իրականացնում է պետական գնումներ – G), արտաքին աշխարհը (երկրի արտաքին աշխարհի հետ փոխգործակցության արդյունք – զուտ արտահանում, NX): Աբստրահումը: Փակ տնտեսությունը: Բացակայում է արտաքին աշխարհի հետ առևտուրը (չի դիտարկվում երկրի արժույթի փոխանակային կուրսը, $NX=0$): Սպառման ֆունկցիան ($C=C(Y-T)$) և հատկությունները: $Y-T$ (տնօրինվող եկամուտ) $=C+S$: Սպառման սահմանային հակումը (MPC): $MPC=\Delta C/\Delta(Y-T)$: Սպառման միջին հակումը (APC): $APC=C/(Y - T)$: Սպառման կարճաժամկետ ֆունկցիան ($C=C_0+MPC(Y - T)$), գրաֆիկը (Ջ. Քեյնս): Կարճաժամկետում սպառումը կախված է ընթացիկ եկամտից, երկարաժամկետ գործոնները (կուտակված հարստություն, եկամտի փոփոխություն երկար ժամկետի ընթացքում և այլն) չեն դիտարկվում: Խնայողությունների ֆունկցիան ($S=-C_0+MPS(Y-T)$): Խնայողության սահմանային հակումը (MPS): $MPS=\Delta S/\Delta(Y-T)$: Խնայողության միջին հակումը (APS): $APS=S/(Y-T)$: Կարճաժամկետում ընթացիկ տնօրինվող եկամտի աճին զուգընթաց APC -ն կրճատվում է, APS -ն աճում է: Սպառման երկարաժամկետ ֆունկցիան, գրաֆիկը (U . Կուլնեց): Սպառումը կախված է տնտեսությունում ընդհանուր եկամտի երկարաժամկետ

դինամիկայից: Երկարաժամկետում APC-ն կայունանում է: Երկարաժամկետում սպառումը կազմում է եկամտի մոտավորապես մշտական բաժինը: Ինչո՞ւ. տեխնոլոգիական առաջընթացը պահանջում է ներդրումներ կատարել մարդկային կապիտալում, առաջանում է տեխնոլոգիական նորույթներին տիրապետելու անհրաժեշտություն: Ներդրումների երեք ուղղությունները մակրոմակարդակում: Ավտոնոմ ներդրումների (ամբողջական եկամտից) ֆունկցիան ($I=e-dr$): Ներդրումները կապիտալում: Որքան ցածր է կապիտալի պաշարը, այնքան բարձր է կապիտալի փոխառության իրական գինը: Որքան շատ է աշխատանք օգտագործվում, այնքան բարձր է կապիտալի փոխառության իրական գինը: Որքան լավն է օգտագործվող տեխնոլոգիան, այնքան բարձր է կապիտալի փոխառության իրական գինը: Ներդրումային ֆունկցիան՝ $I = I(r)$, ներդրումային ծախսերը կախված են իրական տոկոսադրույքից: Անվանական (i) և իրական (r) տոկոսադրույքները, ինֆլյացիան (π), Ֆիշերի հավասարումը: Պետական գնումների և պետական ծախսերի բովանդակությունը: Հավաքագրվում են հարկեր՝ T (զուտ հարկեր), կատարվում են պետական գնումներ՝ G : Պետական բյուջեի պակասուրդը: Պակասուրդի ֆինանսավորումը:

Թեմա 5. Հավասարակշռության հաստատման մեխանիզմը ապրանքների ու ծառայությունների շուկայում: Հավասարակշռությունը ֆինանսական շուկայում: Հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը ֆինանսական շուկայի հավասարակշռության վրա

Դասախոսության ծրագիրը: Հավասարակշռությունը ապրանքների ու ծառայությունների շուկայում: Հավասարակշռությունը ֆինանսական շուկայում: Փոխառու միջոցների նկատմամբ առաջարկը և պահանջարկը: Ազգային, մասնավոր և պետական խնայողությունները: Ներդրումային պահանջարկը:

Հարկաբյուջետային քաղաքականության նպատակները, գործիքները: Ներկառուցված կայուն արարները: Ֆինանսական շուկայի հավասարակշռության վրա հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը բացատրող մոդելները: Դուրսմղման էֆեկտը: Ներդրումային պահանջարկի փոփոխության պատճառները, ազդեցությունը ֆինանսական շուկայի հավասարակշռության վրա: Հարկային խթանները, տեխնոլոգիական նորույթը:

Ամբողջական առաջարկը ապրանքների ու ծառայությունների շուկայում երկար ժամկետում՝ $Y^S = F(K, L)$ (ՀՆԱ-ն ըստ ավելացված արժեքի), որոշվում է արտադրության գործոններով և դրանց միացնող տեխնոլոգիայով (հաստատուն է): Ամբողջական պահանջարկը ապրանքների ու ծառայությունների շուկայում՝ $Y^d = C(Y - T) + I(r) + G$ (ՀՆԱ, ըստ ծախսերի, տրված T և G): Լրացնենք ապրանքների ու ծառայությունների նկատմամբ պահանջարկի վերլուծությունը առաջարկի դիտարկմամբ: Քանի որ G և T փոփոխականները տվյալ պահին հարկաբյուջետային քաղաքականությամբ տրված, էկզոգեն փոփոխականներ են, իսկ արտադրության Y ծավալը հաստատուն է, ուստի $Y = C(Y - T) + I(r) + G$ (տրված Y, T, G): Ապրանքների ու ծառայությունների շուկայում արդյունքի առաջարկը հավասար է արդյունքի նկատմամբ պահանջարկին՝ $Y^S = Y^d$: Իրական տոկոսադրույքը տատանվում է այնպես, որ հավասարակշռի ամբողջական պահանջարկը (ներդրումների միջոցով, $I = I(r)$) ամբողջական առաջարկին: Հավասարակշիռ տոկոսադրույքի պայմաններում ապրանքների ու ծառայությունների նկատմամբ պահանջարկը հավասարվում է դրանց առաջարկին:

Հավասարակշռությունը փակ տնտեսության ֆինանսական շուկայում՝ մակրոմակարդակում ներդրումների-խնայողությունների շուկա: Տոկոսադրույքը փոխառնելու գին է և միաժամանակ ֆինանսական շուկաներում տրվող վարկերի եկամուտը: Փոխառու միջոցների առաջարկը՝ ազգային խնայողություններ (S), փոխառու միջոցների պահանջարկը՝ ներդրումային պահանջարկ ($I(r)$): Ազգային

խնայողությունը հավասար է մասնավոր և պետական խնայողությունների գումարին՝ $S=S^p+S^g$: $S^p=(Y-T) - C$, $S^g=T-G$, $S=Y-C-G$: Ելնելով մակրոտնտեսական հիմնական նույնությունից և այն հանգամանքից, որ սպառումը ֆունկցիա է տնօրինվող եկամտից, հարկաբյուջետային քաղաքականության փոփոխականները տվյալ պահին տրված են, իսկ Y -ը հաստատագրված է արտադրության առկա ռեսուրսներով ու արտադրական ֆունկցիայով, կարող ենք գրել՝ $Y-C(Y-T) - G = I$, $S(\text{տրված})= I(r)$:

Փակ տնտեսության ֆինանսական շուկայի գրաֆիկական մոդելը՝ էնդոգեն r , S , I , ազգային խնայողությունը տրված է (կախված չէ իրական տոկոսադրույքից), ներդրումները կախված են իրական տոկոսադրույքից: Փոխառու միջոցների առաջարկի և փոխառու միջոցների պահանջարկի կորերը: Տոկոսադրույքը տատանվում է այնպես, որ հավասարակշռի պահանջարկը առաջարկին: Ֆինանսական շուկայի հավասարակշռության վրա ազդող արտաքին գործոնները: Հարկաբյուջետային քաղաքականության ընտրանքները: Իրական տոկոսադրույքը՝ r (կարճաժամկետում), սպասումները (կարճաժամկետում), տեխնոլոգիական և ռեսուրսային սահմանափակումները (կարճաժամկետում): Պետության վարքագիծը: Հարկաբյուջետային քաղաքականությունը որոշումների, կանոնների հավաքածու է հարկերի և պետական ծախսերի վերաբերյալ տնտեսական տատանումները կարգավորելու նպատակով: Հիմնական գործիքներն են հարկերի և ծախսերի փոփոխությունները: Հարկերի կրճատումը, պետական գնումների ավելացումը: Հարկերի ավելացումը, պետական գնումների կրճատումը: Ներդրումային պահանջարկի փոփոխությունները (պատճառները): Ներդրումային պահանջարկի ավելացումը: Ազգային խնայողությունը կախված է իրական տոկոսադրույքից ($S=S(r)$): Ներդրումների ծավալի ավելացումը:

Թեմա 6. Փողի շուկան: Փողը և գնաճը: Գնաճը և տոկոսադրույքները

Դասախոսության ծրագիրը: Փողի հիմնական գործառնությունները մակրոմակարդակում: Փողի շուկայի ցուցանիշները: Փողի պահանջարկը (Ֆունկցիան): Փողի առաջարկը (Ֆունկցիան): Փողի առաջարկի մոդելը: Հավասարակշռությունը փողի շուկայում: Փողի քանակական տեսությունը: Փողը և գնաճը: Գնաճը և տոկոսադրույքները: Ֆիշերի էֆեկտը: Սենյորաժը: Դասական երկվությունը (դիխոտոմիա): Փողի չեզոքությունը:

Փողը գործարքների համար օգտագործվող ակտիվների ամբողջությունն է: Փողի երեք հիմնական գործառնությունները: Շրջանառության միջոցի գործառնությոը (փոխանակման միջոց, փողը նպաստում է ապրանքների ու ծառայությունների շրջանառությանը): Արժեքի չափի գործառնությոը (տարբեր ապրանքների ու ծառայությունների գները չափվում են դրամական արտահայտությամբ): Կուտակման միջոցի գործառնությոը (խնայողության միջոց, արժեքի պահպանում): Կուտակման միջոցի գործառնությոին զուգահեռ դիտարկվում է նաև փողի պարտքերի հաշվարկի գործառնությոը (փողի միջոցով հնարավոր է սպառումը տեղափոխել ժամանակի ընթացքում (այսօրվա եկամուտների մի մասը հետաձգել ապագա սպառման համար կամ ավելացնել այսօրվա սպառումն ի հաշիվ ապագա եկամուտների՝ վարկ վերցնելու հաշվին)): Փողի սահմանումը գործնականում: Փողի բազան և փողի ագրեգատները (կոնկրետ սահմանումները կախված են երկրներից): Փողի բազան շրջանառության մեջ գտնվող կանխիկ փողի քանակությունն է և ԿԲ-ում առևտրային բանկերի պահուստների գումարը ($MB=C+R$): Փողի ագրեգատ $M1$ -ը (շրջանառության մեջ գտնվող կանխիկ փողի և ցպահանջ ավանդների գումար): Փողի ագրեգատ $M2$ -ը ($M1$ +ժամկետային ավանդներ): Փողի ագրեգատ $M3$ -ը ($M2$ +արտարժույթով ցպահանջ և ժամկետային ավանդներ): «Քվազիփողեր» QM : Փողի առաջարկը սովորաբար $M2$ ($M1+QM$) ագրեգատն է: Փողի շուկան

առանձնացված է ֆինանսական շուկայից: Սպառման վերաբերյալ որոշումները կայացվում են փողի առկայությունից անկախ: Ովքե՞ր են փողի նկատմամբ ներկայացնում պահանջարկ: Ենթադրվում է, որ ներկայացուցչական (տիպիկ) սպառողը, հազվադեպ ներկայացուցչական (տիպիկ) արտադրողը: Պետությունը պահանջարկ չի ներկայացնում: Փողի պահանջարկը փողի շրջանառության միջոցի գործառույթի հետևանքն է: Փողի իրական պաշարի պահանջարկը: Փողի իրական պաշարը՝ M/P , ապրանքների և ծառայությունների քանակությունն է, որը հնարավոր է գնել M փողի քանակությամբ: Փողի պահանջարկի ֆունկցիան, ըստ դասական տեսության, $(M/P)^d = kY$: Փողի պահանջարկի ֆունկցիան, ըստ քեյնսյան տեսության, $(M/P)^d = L(i, Y)$: Փողի պահանջարկի դրդապատճառները (տրանսակցիոն կամ գործարքային, նախագգուշական, սպեկուլյատիվ): Փողի պահանջարկի քեյնսյան տեսության (առկա են անորոշություններ) զարգացումները: Բաումոլ–Տոբինի մոդելը (բացակայում են անորոշությունը, ֆինանսական շուկան, կան սպառողները և բանկային տոկոսը): Մ. Ֆրիդմանի պորտֆելային տեսությունը: Փողի առաջարկի մոդելը ($M = C + D$): ԿԲ հաշվեկշռի կառուցվածքը (ակտիվ, պասիվ): Առևտրային բանկի հաշվեկշռը (ակտիվ, պասիվ): Փողի ստեղծումը և լիկվիդայնության ապահովումը: Բանկային 100-տոկոսանոց պահուստավորման համակարգը: Բանկային մասնակի պահուստավորման համակարգը: Փողի առաջարկը: Պարտադիր պահուստավորման նորմը, բանկային մոլտիպլիկատորը (բազմարկիչ), դեպոզիտը: Փողի առաջարկի մոդելը բանկային մասնակի պահուստավորման դեպքում: Փողի առաջարկի կախվածությունը էկզոգեն փոփոխականներից (B – փողի բազա, rr – ավանդների պարտադիր պահուստավորման նորմ, cr – փողի դեպոնացման գործակից): Փողի մոլտիպլիկատորը (m – բազմարկիչ): Դրամավարկային քաղաքականության լծակները (փողի առաջարկի կարգավորում): Բաց շուկայում գործարքները: Պահուստավորման պահանջները: Հաշվարկային դրույքը (վերաֆինանսավորման

տոկոսադրույք): Փողի շուկայում հավասարակշռության հաստատման մեխանիզմը կարճաժամկետում $(M/P)^s = L(i, Y)$: Հավասարակշռությունը հաստատվում է անվանական տոկոսադրույքի հարմարվելու (տատանվելու) հաշվին: Հավասարակշռությունը կախված է M-ից, Y-ից, P-ից: Փողի շուկայում հավասարակշռության հաստատման մեխանիզմը երկարաժամկետում $(M/P)^s = kY$: Հավասարակշռությունը հաստատվում է գների մակարդակի հաշվին: Հավասարակշռությունը կախված է Y-ից, k-ից, M-ից: Փողի քանակական տեսությունը (երկարաժամկետ տեսություն): Փողի պահանջարկի երկարաժամկետ ֆունկցիայից անցում քանակական հավասարմանը $(MV = PY)$: Կառուցվածքային երեք վերապահումներ: V-ն տրված է, արտադրության գործոնները և արտադրական ֆունկցիան որոշում են թողարկման Y մակարդակը, որը փոխվում է շատ դանդաղ՝ տեխնոլոգիական առաջադիմության արդյունքում, ԿԲ-ն վերահրսկում է փողի M առաջարկը, ուրեմն նաև գնաճը: Դրամավարկային քաղաքականության իրականացումը հանգեցնում է միայն գների մակարդակի փոփոխություններին: ԿԲ-ի կողմից սահմանված փողի M առաջարկը որոշում է արդյունքի PY անվանական արժեքը: Տոկոսային փոփոխություններով արտահայտված քանակական հավասարումը: Գների մակարդակի տոկոսային փոփոխությունը գնաճի տեմպն է: Քանակական տեսությունը ու Ֆիշերի հավասարումը: Փողի քանակական տեսությունը ցույց է տալիս, որ փողի աճի տեմպը որոշում է գնաճի տեմպը: Այնուհետև, Ֆիշերի հավասարումը ցույց է տալիս, որ գումարելով իրական տոկոսադրույքը և գնաճի տեմպը, կորոշենք անվանական տոկոսադրույքը: Քանակական տեսությունը ու Ֆիշերի հավասարումը, ցույց են տալիս, թե ինչպես է փողի աճն ազդում անվանական տոկոսադրույքի վրա: Ըստ քանակական տեսության՝ փողի աճի տեմպի բարձրացումը 1 տոկոսով բարձրացում է գնաճի տեմպը 1 տոկոսով: Ֆիշերի հավասարման համաձայն՝ գնաճի տեմպի 1 տոկոսով բարձրացումն իր հերթին բարձրացնում է անվանական տոկոսադրույքը՝ 1 տոկոսով: Գնաճի տեմպի և անվանական տոկոսադրույքի միջև այս կապը

կոչվում է Ֆիշերի էֆեկտ: Անվանական տոկոսադրույքի ճշգրտումը գնաճի սպասվող տեմպով (π^e): Ֆիշերի էֆեկտի լրիվ տարբերակը: Փողը կանխիկ պահելու ծախսը: Ֆիշերի բանաձևը իրական տոկոսադրույքի համար: π -ի փոքր արժեքների դեպքում՝ $r = i - \pi$, π -ի մեծ արժեքների դեպքում (10%-ը գերազանցող)՝ $r = (i - \pi)/(1 + \pi)$: Սենյորաժը (եկամուտ փողի թողարկումից): Գնաճի հարկը: Հիպերգնաճը: Դասական երկվությունը, դասական տեսություն: Իրական և անվանական փոփոխականների տեսական տարանջատումը: Փողի չեզոքությունը: Փողի առաջարկը չի ազդում իրական փոփոխականների վրա: Դասական տեսությունը թույլ է տալիս ուսումնասիրել, թե ինչպես են որոշվում իրական փոփոխականները՝ առանց փողի առաջարկին որևէ անդրադարձ կատարելու:

Թեմա 7. Հավասարակշռությունը աշխատանքի շուկայում: Գործազրկությունը որպես տնտեսական երևույթ

Դասախոսության ծրագիրը: Աշխատուժի հետազոտությունն ըստ ԱՄԿ ստանդարտների: Աշխատանքի շուկան բնութագրող առանցքային ցուցանիշները: Աշխատանքային ռեսուրսները, աշխատուժը, աշխատուժից դուրս բնակչությունը, գործազուրկների թիվը, զբաղվածների թիվը, զբաղվածության մակարդակը, գործազրկության մակարդակը: Ցուցանիշների հաշվարկման մեթոդիկան: Աշխատանքի շուկայի առանձնահատկությունները: Աշխատանքի առաջարկը, պահանջարկը: Աշխատանքի շուկայի հավասարակշռության մոդելները (դասական, քեյնսյան): Անվանական և իրական աշխատավարձը: Գործազրկության տեսակները: Լրիվ զբաղվածությունը: Գործազրկության բնական (կայուն) մակարդակը (NAIRU): Գործազրկության բնական (կայուն) մակարդակը որոշող գործոնները: Իրական աշխատավարձի կայունությունը և սպասման գործազրկությունը: Նվազագույն աշխատավարձի մասին օրենքը, արհմիու-

թյունները և կոլեկտիվ պայմանագրերը, խթանող աշխատավարձերը: Զբաղվածության կարգավորման քաղաքականությունը: Զբաղվածության ապահովման ակտիվ և պասիվ քաղաքականությունները: Օուկենի օրենքը:

Աշխատանքի շուկայում ձևավորվում և կարգավորում են աշխատանք առաջարկողների և աշխատանքի նկատմամբ պահանջարկ ներկայացնողների միջև հարաբերություններ: Աշխատանքի շուկայում սահմանվում է աշխատանք գործոնի գինը (աշխատավարձ):

Հավասարակշռությունը աշխատանքի շուկայում: Իրական աշխատավարձի (W/P) այնպիսի հավասարակշռված մակարդակ, որի պայմաններում աշխատանքի պահանջարկը (L^d) հավասար է աշխատանքի առաջարկին (L^s): Աշխատանքի շուկայի հավասարակշռության վրա ազդող գործոնները (տեխնոլոգիաներ, աշխատանքի շուկայի ինստիտուտներ, արտադրողների և աշխատողների սպասումներ): Գործազրկության մակարդակը (u) գործազուրկների տեսակարար կշիռն է աշխատուժի մեջ ($u = U/L$): Աշխատուժի մոդելը ($L = E + U$): Զբաղվածության մակարդակը զբաղվածների տեսակարար կշիռն է աշխատաքային ռեսուրսներում: Գործազրկության տեսակները (հպանցիկ, կառուցվածքային, պարբերաշրջանային): Լրիվ զբաղվածությունը: Աշխատանքի շուկայի դասական և քեյնսյան հայեցակարգերը: Ըստ դասականների՝ լրիվ զբաղվածությունը շուկայական տնտեսության նորմ է: Տվյալ աշխատավարձի պայմաններում աշխատանք վաճառել ցանկացողները կարող են այն իրականացնել: Կան աշխատողներ, որոնք չեն ուզում աշխատել տվյալ աշխատավարձով: Գործազրկությունը կամավոր է: Աշխատանքի առաջարկը կախված է իրական աշխատավարձից: Ըստ քեյնսականների՝ զբաղվածությունը որոշվում է արդյունավետ պահանջարկի դինամիկայով: Լրիվ զբաղվածությունը աշխատանքի շուկայում պատահական երևույթ է. աշխատանքի շուկան հավասարակշռվում է գործազրկության պայմաններում: Աշխատանքի առա-

ջարկը կախված է անվանական աշխատավարձից: Գործազրկության բնական մակարդակը (գործազրկության մակարդակ լրիվ զբաղվածության պայմաններում, աշխատուժի մեջ գործազուրկների կայուն տեսակարար կշիռ երկարաժամկետում): $NAIRU$ (Non-Accelerating-Inflation Rate of Unemployment) – գործազրկության բնական մակարդակ, որը կայունացնում է գնաճը (գնաճը չարագացնող գործազրկության մակարդակ), տնտեսությունում չկան գնաճային կամ գնանկումային ճնշումներ: Գործազրկության բնական մակարդակը որոշվում է գործազրկության նախորդ 10 տարիների փաստացի մակարդակների և հաջորդ 10 տարիների մակարդակների (օգտագործվում են կանխատեսումային գնահատականներ, հաշվի է առնվում գնաճի սպասվող մակարդակի հավանական դինամիկան) միջինացման արդյունքում: Գործազրկության բնական մակարդակը հպանցիկ և կառուցվածքային գործազրկությունների մակարդակների գումարն է: Գործազրկության բնական (կայուն) մակարդակը կախված է աշխատանքի տեղավորման և աշխատանքից ազատման տեսակերից: Եթե s -ը աշխատանքից ազատվողների տեսակարար կշիռն է, f -ը՝ աշխատանքի տեղավորման տեսակարար կշիռը, և աշխատանքի շուկան կայուն է (աշխատանք կորցնողների թիվը հավասար է աշխատանք գտնողների թվին՝ $fU = sE$), ապա գործազրկության կայուն մակարդակը՝ $u = s / (f + s)$: Իրական աշխատավարձի մակարդակի հավասարակշռված արժեքից բարձրացման երեք պատճառները: Իրական աշխատավարձի կայուն մակարդակը (աշխատավարձի կոշտություն): Սպասման գործազրկությունը: Օուկենի օրենքի մեկնաբանությունները: *Օուկենի օրենքը* կապում է գործազրկության մակարդակի տատանումները ΔU տատանումների հետ՝ $(Y - Y')/Y' = -\beta(U - U')$, β -ն էմպիրիկ գործակից է (տարբերվում է ըստ երկրների, ընդունում է արժեքներ 2-3 միջակայքում), ցույց է տալիս, թե որքանով է ΔU -ն զգայուն ցիկլիկ գործազրկության մակարդակի փոփոխությունների նկատմամբ: Եթե գործազրկության փաստացի մակարդակը բարձր է բնական մակարդակից 1 տոկոսով, ապա արտադրության փաստացի ծավալը

ցածր կլինի ներուժայինից β տոկոսով: Օուկենի օրենքը ցույց է տալիս, որ գործազրկության մակարդակի յուրաքանչյուր մեկ տոկոսով աճի դեպքում (նախորդ տարվա ցուցանիշի հետ համեմատած) իրական ՀՆԱ աճի տեմպը կրճատվում է 2 տոկոսով¹ ($Y - Y_{-1} / Y_{-1} = 3\% - 2(U - U_{-1})$): Եթե գործազրկության փաստացի մակարդակը նախորդ տարվա ցուցանիշի համեմատ չի փոխվում, ապա իրական ՀՆԱ աճի տեմպը կազմում է տարեկան 3% (պայմանավորված բնակչության հավելաճով, կապիտալի կուտակմամբ, գիտատատեխնիկական առաջընթացով):

ՀՆԱ-ի դրական/բացասական ճեղքը՝ համապատասխանաբար սպառողական շուկայում ձևավորվող գնաճային/գնանկունային ճնշումներ: Զրոյական կամ չեզոք ճեղքը:

Թեմա 8. Մակրոտնտեսական ընդհանուր հավասարակշռությունը: Ամբողջական պահանջարկի և ամբողջական առաջարկի AD-AS մոդելը: Մակրոտնտեսական կայունացման քաղաքականությունը

Դասախոսության ծրագիրը: Ամբողջական պահանջարկը և այն պայմանավորող գործոնները: Գնային և ոչ գնային գործոնները: Ամբողջական պահանջարկի կորը բնութագրող էֆեկտերը: Կորի տեղաշարժերը: Ինչպե՞ս տարբերել կարճ և երկար ժամանակահատվածները: Ամբողջական առաջարկը: Ամբողջական առաջարկի կորի մեկնաբանումները կարճ, միջին, երկար ժամանակահատվածներում: Դասական և քեյնսյան մոդելները, միջանկյալ հատվածը: Նորդասական սինթեզը: Մակրոտնտեսական հավասարակշռությունը AD-AS մոդելում: Տնտեսական տատանումները: Պահանջարկի և առաջարկի շոկերը: Մակրոտնտեսական կայունացման քաղաքականության իրականացման մեխանիզմը: Անցում կարճաժամկետ հավասարակշռությունից երկարաժամկետին: Ժամանակային խզումները (լագեր): Ակ-

տի՛վ, թե՛ պասիվ տնտեսական քաղաքականությունը: Տնտեսական քաղաքականության կայունության դիտարկումները:

AD-AS բազային մոդելը: Ուսումնասիրում է տնտեսությունում թողարկման ծավալի և գների մակարդակի տատանումները, դրանց պատճառները և հետևանքները: Մոդելի նախապայմանները կախված են դիտարկվող ժամանակահատվածի տևողությունից: Շատ կարճ ժամանակահատվածը (քեյնսյան մոդել): Երկարաժամկետ հատվածը (մոդիֆիկացված նորդասական մոդել): Միջանկյալ հատվածը (անցումային տարբերակ): Մոդելի մասնակիցները: Տիպիկ սպառողը: Տիպիկ արտադրողը: Պետությունը (T-ն, G-ն, M-ը էկզոգեն են): Մոդելում դիտարկվող շուկան է ապրանքների ու ծառայությունների շուկան: Էնդոգեն փոփոխականներն են թողարկումը՝ Y (եկամուտ) և գների մակարդակը՝ P (գնաճ P): Մոդելի կարևոր բաղադրիչներն են ամբողջական պահանջարկը և ամբողջական առաջարկը: Ամբողջական պահանջարկի ֆունկցիան՝ $Y^d(P)$, նկարագրում է ապրանքների և ծառայությունների ընդհանուր պահանջարկի կախվածությունը գների մակարդակից (բարիքների գին): Ֆունկցիայի գրաֆիկը կոչվում է ամբողջական պահանջարկի կոր (AD – aggregate demand): Ամբողջական պահանջարկի կորի դուրս բերումը փողի քանակական տեսության միջոցով: Քանակական տեսության հավասարումը, որպես ամբողջական պահանջարկի մոդել, $MV=PY$, որտեղ M-ը՝ փողի առաջարկն է (տրված է պետության կողմից), V-ն՝ փողի շրջապտույտի արագությունն է (որոշվում է տեխնոլոգիաներով, այստեղ ընդունում ենք կայուն), Y-ը՝ գնողունակ (արդյունավետ) պահանջարկն է, P-ն գների մակարդակը: $Y^d(P) = (M/V)/P$: Կարճ ժամկետում ամբողջական պահանջարկի կորի թեքության և տեղադրման տեսական նկարագիրը ներկայացնում է IS-LM մոդելը: Քանակական հավասարումը LM կորի մասնակի դեպք է (փողի նկատմամբ պահանջարկը կախված չէ տոկոսադրույքից): AD կորի բացասական թեքությունը պայմանավորված է գնային գործոնների ազդեցությամբ: Տեղափոխությունը ամբողջա-

կան պահանջարկի կորի երկայնքով: Պիգուի էֆեկտ, Քեյնսի էֆեկտ, Մանդել-Ֆլեմինգի էֆեկտ (գների մակարդակի և իրական ՀՆԱ-ի կապը հակադարձ է): Ոչ գնային գործոնների ազդեցությունը: Ամբողջական պահանջարկի կորի տեղաշարժերը: Էկզոգեն պարամետրերի կամ վարքագծային ֆունկցիաների փոփոխության (փողի առաջարկ, փողի շրջապտույտի արագություն, հարկեր, պետական գնումներ, սպառման ֆունկցիա, ներդրումային ֆունկցիա) արդյունքը: Ինչպե՞ս են տարբերվում կարճաժամկետ ու երկարաժամկետ հեռանկարներն ըստ մակրոտնտեսագետների: Տարբերությունը գների և իրական փոփոխականների վարքագծի մեջ է: Կարճաժամկետում (սովորաբար 2-3 տարի) անվանական ցուցանիշները՝ ապրանքների և ծառայությունների գները, անվանական աշխատավարձը, անվանական տոկոսադրույքը, շուկայական տատանումների ազդեցությամբ փոփոխվում են դանդաղ, սովորաբար դիտարկվում է դրանց հարաբերական կոշտությունը: Իրական ցուցանիշները՝ թողարկման իրական ծավալ, զբաղվածության մակարդակ, իրական տոկոսադրույք, ավելի ճկուն են: Երկարաժամկետում, հակառակը, գները փոփոխվում են բավականին արագ, ճկուն են, իսկ իրական ցուցանիշները փոփոխվում են չափազանց դանդաղ (վերլուծությունների պարզության համար իրական ցուցանիշները մոդելներում տրված են (կայուն)): Ամբողջական առաջարկը: Առաջարկի կորի դիրքը կախված է դիտարկվող ժամանակահատվածից: Կարճաժամկետում ամբողջական առաջարկի SRAS հորիզոնական կորը (քեյնսյան մոդել, քեյնսյան հատված, գների բացարձակ կոշտություն): Գների մակարդակն էկզոգեն տրված է (P), ռեսուրսները սահմանափակ են, հնարավոր է թողարկման ցանկացած մակարդակ (առաջարկը տրվում է գնողունակ պահանջարկով): Ամբողջական առաջարկի կորի միջանկյալ հատվածը (գները տրված չեն, բայց բացարձակ ճկուն էլ չեն): Քեյնսյան տրամաբանությունը (անվանական աշխատավարձը տրված է): Որքան բարձր է գների մակարդակը, այնքան ցածր է իրական աշխատավարձը, բարձր է արտադրողի շահույթը, մեծ է թողարկումը: Ամբողջական

առաջարկի միջնաժամկետ կորը (AS): Երկարաժամկետում ամբողջական առաջարկի LRAS ուղղահայաց կորը (նորդասական տրամաբանություն): Շուկաները մրցունակ են, թողարկման ծավալը կայուն է (կախված չէ գների մակարդակից, այլ կախված է արտադրության գործոնների քանակությունից և տեխնոլոգիաներից), տնտեսությունը գործում է արտադրության գործոնների լրիվ զբաղվածության պայմաններում (արտադրվում է ներուժային ՀՆԱ): Հավասարակշռությունը AD-AS մոդելում. գրաֆիկական տեսքը: Մակրոտնտեսական կայունացման քաղաքականությունը (հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականություն): Պահանջարկի կորի տեղաշարժերը (G-ի, T-ի, M-ի, V-ի փոփոխությունները), թողարկման մեծության և գների մակարդակի փոփոխությունները կարճ, միջին և երկար ժամանակահատվածներում: Անցում կարճաժամկետ տատանումների վերլուծությունից երկարաժամկետին: Ամբողջական առաջարկի անբարենպաստ և բարենպաստ շոկերը: Առաջարկի կտրուկ փոփոխությունները կարճաժամկետում՝ AD-AS մոդելում: Ինքնակարգավորման մեխանիզմի և խթանող քաղաքականության հետևանքները:

Տնտեսությունների անկման սցենարները՝ V-աձև, U-աձև, L-աձև: Դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների կորորդինացիա: Դրամավարկային քաղաքականությունը (գների և ֆինանսական կայունության ապահովում): Հարկաբյուջետային քաղաքականությունը նպաստում է տնտեսական ակտիվության վերականգնմանը: Ժամանակային ներքին և արտաքին խզումները (տնտեսական քաղաքականությունների լագեր): Օրինակ՝ դրամավարկային քաղաքականության գնաճի նպատակադրման ռազմավարությունը գների կայունության ապահովմանն ուղղված ռազմավարություն է: Գների կայունությունը, որը սահմանված է գնաճի նպատակային ցուցանիշով, ձեռք է բերվում ԿԲ-ի կողմից քաղաքականության տոկոսադրույքի սահմանման միջոցով: Տոկոսադրույքն ազդում է ֆինանսական շուկայի մյուս տոկոսադրույքնե-

րի, փոխարժեքի և գնաճային սպասումների վրա, որոնք իրենց հերթին ազդում են ամբողջական պահանջարկի, այնուհետև՝ գնաճի ցուցանիշի վրա: Քանի որ տոկոսադրույքի սահմանման և գնաճի վրա դրա ազդեցության ժամկետների միջև առկա է լագ, ԿԲ խորհուրդը տվյալ պահին տոկոսադրույքը սահմանում է ապագայի գնաճը կառավարելու նպատակով, ինչի համար որպես միջանկյալ նպատակ ընդունում է գնաճի կանխատեսված մակարդակը: Ակտի՞վ, թե՞ պասիվ տնտեսական քաղաքականություն: Տնտեսական քաղաքականության կայունության պայմանները (ակտի՞վ կայուն, թե՞ պասիվ կայուն տնտեսական քաղաքականություն):

Թեմա 9. Մակրոտնտեսական միաժամանակյա հավասարակշռությունը ապրանքների ու ծառայությունների և փողի շուկաներում: IS-LM մոդելը: Ամբողջական պահանջարկի կարգավորումը

Դասախոսության ծրագիրը: IS-LM մոդելի հիմնական փոփոխականները և հավասարումները: Քեյնսյան խաչը: Ծախսերի բազմարկիչը: Հարկերի բազմարկիչը: IS կորի ստացումը (գրաֆիկական արդյունք): IS կորի հանրահաշվական հավասարումը: Փողի իրական պաշարների շուկան: Փողի իրացվելիության նախընտրելիության տեսությունը: LM կորի ստացումը (գրաֆիկական արդյունք): LM կորի հանրահաշվական հավասարումը: Հավասարակշռությունը IS-LM մոդելում: Հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կորոդինացիան: Հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների հարաբերական արդյունավետությունը փակ տնտեսությունում: Խթանող հարկաբյուջետային քաղաքականությունը: Դուրսմղման էֆեկտը: Բազմարկչի էֆեկտը: Խթանող դրամավարկային քաղաքականությունը: IS և LM կորերի թեքությունը, տեղաշարժերը: Ամբողջական պահանջարկի AD կորի դուրսբերումը IS-LM մոդելից: Տնտեսական քաղաքականությունը IS-LM

և AD-AS մոդելներում գների մակարդակի փոփոխությունների պայմաններում: Մակրոտնտեսական կարճաժամկետ և երկարաժամկետ հավասարակշռությունները:

Մակրոտնտեսական ընդհանուր հավասարակշռության (կարճաժամկետ) քեյնսյան վերլուծությունը ապրանքների ու ծառայությունների և փողի շուկաներում: IS-LM մոդելը (Հիքս, Հանսեն): Մոդելը թույլ է տալիս գնահատել մակրոտնտեսական իրավիճակը ամբողջական պահանջարկի ձևավորման տեսանկյունից և ամբողջական պահանջարկի վրա ազդեցության հնարավորությունները ֆիսկալ և մոնետար քաղաքականությունների տարբեր գործիքների օգնությամբ: Մոդելի նախապայմանները: Արդյունքի թողարկումը որոշվում է պահանջարկով: Գների մակարդակը և անվանական աշխատավարձը անփոփոխ են: Տնտեսությունում կան ազատ ռեսուրսներ (մասնավորապես աշխատանք)՝ թողարկման ծավալներն ավելացնելու համար: Փողի իրական պաշարների նկատմամբ պահանջարկը կարճաժամկետ է (կախված է իրական եկամուտներից և անվանական տոկոսադրույքից): Գները կայուն են (բոլոր փոփոխականների անվանական և իրական արժեքները համընկնում են): Փողի իրական պաշարների պահանջարկը՝ $((M/P)^d = L(Y, r))$: Մոդելի մասնակիցներն են տիպիկ սպառողը, տիպիկ արտադրողը և պետությունը: Մոդելի հիմնական շուկաները: IS կորի ստացումը: Քեյնսյան խաչը: Ի՞նչն է տնտեսությունում պայմանավորում ամբողջական եկամուտը ներդրումների տրված մակարդակի պայմաններում: Պլանավորվող ծախսերը ($E=C+I+G$), $C=C(Y-T)$, $I=I(r)$: Տրված (էկզոգեն) r , G , T : Y -ը (ամբողջական եկամուտ, ամբողջական արդյունք, ամբողջական ծախսեր) որոշված չէ: Տնտեսությունը հավասարակշիռ վիճակում՝ Քեյնսյան խաչի մոդելում ($Y(\text{փաստացի ծախսեր})=E(\text{պլանավորվող ծախսեր})$): Հավասարակշռության վիճակի հաստատումը: Ռեցեսիոն ճեղքը: Ինֆլացիոն ճեղքը: Հարկաբյուջետային քաղաքականությունը և պետական ծախսերի բազմարկիչը (մոլտիպլիկատոր) Քեյնսյան խաչում: Պլանավորվող ծախսերի կո-

րի դեպի վեր տեղաշարժը՝ ΔG չափով: Պետական գնումների սկզբնական փոփոխությունը $=\Delta G$, սպառման առաջին փոփոխությունը $=MPC \times \Delta G$, սպառման երկրորդ փոփոխությունը $=MPC^2 \times \Delta G$, սպառման երրորդ փոփոխությունը $=MPC^3 \times \Delta G$, սպառման n-երրորդ փոփոխությունը $=MPC^n \times \Delta G$, $\Delta Y = (1 + MPC + MPC^2 + MPC^3 + \dots + MPC^n) \Delta G$: Ծախսերի բազմարկիչը՝ $\Delta Y / \Delta G = 1 / (1 - MPC)$: Դրական կապ: Հարկաբյուջետային քաղաքականությունը և հարկերի բազմարկիչը (մուտիպլիկատոր) Քեյնսյան խաչում: Պլանավորվող ծախսերի կորի դեպի վեր տեղաշարժ՝ $MPC \times \Delta T$ չափով: $\Delta Y = (MPC + MPC^2 + MPC^3 + \dots + MPC^n) \Delta T$: Հարկերի բազմարկիչը՝ $\Delta Y / \Delta T = -MPC / (1 - MPC)$: Հակադարձ կապ: Քեյնսյան խաչը (էնդոգեն r) և ներդրումների ֆունկցիայի ($I = I(r)$) կորը (գրաֆիկական պատկեր) IS կորի ստացման պայման: IS կորի հավասարումը ($Y = C(Y - T) + I(r) + G$, էկզոգեն տրված T և G): Հավասարումը նկարագրում է հավասարակշռված ամբողջական թողարկման կախվածությունը իրական տոկոսադրույքից: Կախվածության գրաֆիկը «Y-r» առանցքներում ապրանքների և ծառայությունների շուկան նկարագրող IS կոր: LM կորի ստացումը: Իրացվելիության նախընտրելիության տեսությունը: Փողի իրական պաշարների շուկան: Փողի առաջարկը՝ $(M/P)^s = M/P$ (էկզոգեն տրված M, կայուն գներ): Փողի պահանջարկը՝ $(M/P)^d = L(Y, r)$: Հավասարակշռությունը փողի շուկայում՝ $M/P = L(Y, r)$: LM կորի հավասարումը: Հավասարումը կապում է իրական տոկոսադրույքի մակարդակը իրական եկամտի (թողարկման) մակարդակի հետ: Թողարկման յուրաքանչյուր տրված մակարդակի պայմաններում հավասարումը հնարավորություն է տալիս որոշելու իրական տոկոսադրույքի հավասարակշռված մակարդակը, որի դեպքում փողի իրական պաշարների պահանջարկը հավասար է փողի իրական պաշարների տրված առաջարկին: Որքան բարձր է թողարկման մակարդակը, այնքան բարձր պետք է լինի իրական տոկոսադրույքը (իրական տոկոսադրույքից փողի իրական պաշարների պահանջարկի ֆունկցիայի հակադարձ կախվածության առկայություն), որպեսզի ապահովի հավասարակշռությունը փողի իրական պաշարների շուկայում:

Կախվածության գրաֆիկը «Y-r» առանցքներում (փողի շուկան նկարագրող LM կորը): Հավասարակշռությունը IS-LM մոդելում: (Y^* , r^*) զույգը, որի պայմաններում մոդելի բոլոր շուկաներում միաժամանակ հաստատվում է հավասարակշռություն (գրաֆիկորեն IS և LM կորերի հատման կետ): Հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացիան IS-LM մոդելում: Տնտեսության արձագանքը զսպող հարկաբյուջետային քաղաքականությանը: Դրամավարկային քաղաքականության միջոցառումները: Հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների հարաբերական արդյունավետությունը փակ տնտեսությունում՝ IS-LM մոդելում: Հարկաբյուջետային խթանող քաղաքականությունը: Դուրսմղման էֆեկտը: Բազմարկչի էֆեկտը: Հարկաբյուջետային խթանող քաղաքականության հարաբերական էֆեկտիվությունը որոշվում է ներդրումների դուրսմղման էֆեկտի մեծությամբ: Եթե դուրսմղման էֆեկտը փոքր է թողարկման աճի էֆեկտից, ապա այլ հավասար պայմաններում ֆիսկալ քաղաքականությունն էֆեկտիվ է: Սպառման սահմանային հակումը ($0 < MPC < 1$): Դրամավարկային խթանող քաղաքականությունը: Փողի առաջարկի ավելացումը: Տնտեսական կարճաժամկետ աճը առանց ներդրումների դուրսմղման էֆեկտի (M^s -ի աճ, r -ի նվազում, I -ի աճ, Y -ի աճ, C -ի աճ): Հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների հարաբերական էֆեկտիվությունը կախված է. 1. ներդրումների ֆունկցիայի՝ շուկայական տոկոսադրույքի փոփոխությունների նկատմամբ, զգայունության աստիճանից, 2. փողի իրական պաշարների պահանջարկի՝ շուկայական տոկոսադրույքի փոփոխությունների նկատմամբ զգայունության աստիճանից: Զառիթափի (կտրուկ թեքված) կամ գառիկող (մեղմ թեքված) IS և LM կորերը: Գների մակարդակի փոփոխությունը: Ամբողջական պահանջարկի AD կորի դուրսբերումը IS-LM մոդելից: «Y-r» կոորդինատային հարթությունը (P -ի բարձրացում, կայուն M , $(M/P)^s$ -ի կրճատում, LM կորի ձախ տեղաշաժ, r -ի բարձրացում, I -ի կրճատում, Y -ի կրճատում): «Y-P»

կորորդինատային հարթությունը՝ AD կոր (տեղափոխություն AD կորի երկայնքով): Հարկաբյուջետային և դրամավարկային խթանող քաղաքականությունների ազդեցությունները «Y-r» և «Y-P» կորորդինատային հարթություններում՝ կայուն գների պայմաններում (IS, LM, AD կորերի տեղաշարժեր): IS-LM մոդելի օգնությամբ անցում կարճաժամկետից երկարաժամկետ հատվածին: Տնտեսական քաղաքականությունը IS-LM և AD-AS մոդելներում գների մակարդակի փոփոխությունների պայմաններում: Մակրոտնտեսական կարճաժամկետ ու երկարաժամկետ հավասարակշռությունների հաստատման կետերը:

Թեմա 10. Ամբողջական առաջարկը և Ֆիլիպսի կորը: Առաջարկի խթանման քաղաքականությունը: Առաջարկի տնտեսագիտությունը

Դասախոսության ծրագիրը: Ամբողջական առաջարկը կարճաժամկետում: Առաջարկի չորս մոդելները: Ֆիլիպսի կորը որպես ամբողջական առաջարկի կորի այլընտրանքային մեկնաբանություն: Գործազրկության և գնաճի միջև փոխադարձ կապը կարճ և երկար ժամանակահատվածներում: Ֆիլիպսի կարճաժամկետ կորի հավասարումը: Ֆիլիպսի երկարաժամկետ կորը: Գնաճի և գործազրկության միջև ընտրության հիմնախնդիրը կարճաժամկետում: Հակագնաճային քաղաքականությունը: Գնաճի դեմ պայքարի կորստի գործակիցը:

Մակրոտնտեսական ընդհանուր հավասարակշռության երկրորդ կողմը ամբողջական առաջարկն է: Ամբողջական առաջարկի վերաբերյալ քեյնսյան և դասական ուղղությունների ժամանակակից հետևորդների պատկերացումները կարճաժամկետում: Կարճաժամկետում ամբողջական առաջարկը մի մեծություն է, որը կախված է գների մակարդակից, և առաջարկի AS կորն ունի դրական թեքություն: Գները ամրագրված չեն, բայց բացարձակ ճկուն էլ

չեն: AS կորի հավասարում՝ $Y = Y^* + \alpha(P - P^e)$: Գրաֆիկական ներկայացում: Թողարկման մակարդակը շեղվում է ներուժայինից (բնական), եթե գների սպասվող մակարդակը չի համապատասխանում փաստացի մակարդակին: α դրական գործակիցը ցույց է տալիս, թե որքանով է թողարկման մակարդակը զգայուն գների մակարդակի անսպասելի փոփոխությունների նկատմամբ: $1/\alpha$ -ը ամբողջական առաջարկի կորի թեքությունն է: Ամբողջական առաջարկի կարճաժամկետ կորը բնութագրող 4 մոդելը: Թողարկման փաստացի ծավալը (Y) կարող է գերազանցել ներուժայինը (Y^*), եթե գների փաստացի մակարդակը (P) բարձր է գների սպասվող մակարդակից (P^e): Աշխատողների սխալ պատկերացումների մոդելը: Աշխատանքի պահանջարկը ($L^d = L^d(W/P)$): Աշխատանքի առաջարկը ($L^s = L^s(W/Pe)$): Աշխատողները գիտեն W -ն, բայց ոչ P -ն: Սպասվող իրական աշխատավարձը՝ $W/P^e = W/P \times P/P^e$: P -ի անկանխատեսելի աճը: Աշխատանքի առաջարկը կլինի բարձր, քանի որ աշխատողները մտածում են, որ իրենց իրական աշխատավարձը բարձր է, քան իրականում է: Արդյունքը թողարկման և զբաղվածության աճն է ($Y = Y^* + \alpha(P - P^e)$): Անկատար տեղեկատվության մոդելը: Արտադրողներից յուրաքանչյուրն արտադրում է մեկ ապրանք, յուրաքանչյուրը սպառում է բազմաթիվ ապրանքներ, շփոթում են գների ընդհանուր մակարդակի փոփոխությունները հարաբերական գների փոփոխությունների հետ:

Գների ընդհանուր մակարդակի աճը, արտադրվող ապրանքի հարաբերական գնի մասամբ աճը, գների ընդհանուր մակարդակի մասամբ աճը: Գների ընդհանուր մակարդակի մասամբ աճի դեպքում կաճի յուրաքանչյուր ապրանքի թողարկումը ($Y = Y^* + \alpha(P - P^e)$): Ոչ ճկուն գներով մոդելը: Գնագոյացման գործընթացը ֆիրմայի մակարդակով: Ֆիրմայի համար ցանկալի գինը կախված է գների ընդհանուր մակարդակից (սահմանում է ծախսերը), համախառն եկամտի մակարդակից (որքան մեծ է եկամուտը, այնքան բարձր է պահանջարկը, բարձր է թողարկումը, մեծ են ծախսերը, և բարձր է գինը) $p = P + \alpha(Y - Y^*)$: Ֆիրմաների մի մասը միշտ կարող է փոխել

ապրանքների գները, մյուս մասը (s մասը) ինչ-որ ժամանակ գները պահում է անփոփոխ ($p = P^e + a(Y^e - Y^*)$): Չկան սպասումներ թողարկման փաստացի մակարդակի՝ բնական մակարդակից, շեղումների մասով ($(Y^e - Y^* = 0)$): Այս դեպքում, գների ընդհանուր մակարդակը կլինի՝ $P = sP^e + (1 - s)[P + a(Y - Y^*)]$; $P = P^e + (1 - s)(a/s)[P + a(Y - Y^*)]$; $Y = Y^* + \alpha(P - P^e)$, որտեղ $\alpha = s/[1 - s a]$: Կոշտ աշխատավարձի մոդելը: Անվանական աշխատավարձը (W) անփոփոխ է, գնի բարձրացումը իջեցնում է իրական աշխատավարձը (W/P), ցածր իրական աշխատավարձի պայմաններում ֆիրմաները ներգրավում են շատ աշխատողներ, արտադրության ծավալներն ավելանում են: Անվանական աշխատավարձը (W)=գների սպասվող մակարդակ (P^e) \times նպատակային իրական աշխատավարձ (w): Ֆիրմաները գիտեն P գնի իրական մակարդակը: Իրական աշխատավարձը (W/P)=նպատակային իրական աշխատավարձ (w) \times (P^e/P): Ենթադրվում է, որ զբաղվածության մակարդակը որոշվում է ֆիրմաների կողմից աշխատանքի նկատմամբ ներկայացվող պահանջարկով $L = L^d (W/P)$, թողարկումը կախված է աշխատողների թվից $Y = F(L)$: Ամբողջական առաջարկ՝ ($Y = Y^* + \alpha(P - P^e)$): Ամբողջական առաջարկի կարճաժամկետ կորը ցույց է տալիս դրական կախվածություն գների մակարդակի և թողարկման ծավալների միջև: Գների մակարդակի հավելածի տեմպը (գնաճի մակարդակ, գնաճի տեմպ, գների մակարդակի տոկոսային փոփոխություն) $\pi = (P - P_{-1})/P_{-1}$, P_{-1} -ն գների միջին մակարդակն է ընթացիկ տարում, P_{-1} -ը՝ գների միջին մակարդակը նախորդ տարում: Գների միջին մակարդակը հաշվարկվում է գնային ինդեքսների միջոցով: Գնաճի տեմպի հաշվարկման հիմք՝ ՍԳԻ: ՍԳԻ հավելածի տեմպը: Գործազրկության մակարդակի և թողարկման ծավալների միջև հակադարձ կապը: Ամբողջական առաջարկի կարճաժամկետ կորը ենթադրում է բացասական կախվածություն գնաճի (ինֆլյացիայի) տեմպի և գործազրկության մակարդակի միջև (Ֆիլիպսի կարճաժամկետ կոր, գրաֆիկական տեսքը): Ֆիլիպսի կարճաժամկետ կորի նախնական տարբերակը (հակադարձ կապ գործազրկության մակարդակի և

անվանական աշխատավարձի հավելածի տեմպի միջև): Ֆիլիպսի կարճաժամկետ կորի (մոդիֆիկացված տարբերակ, Մ.Ֆրիդման, Է.Ֆելդիս) հավասարում $\pi = \pi^e - \beta (U - U^*) + \varepsilon$: U^* -NAIRU (գործազրկության բնական մակարդակ, գնաճը չարագացնող գործազրկության մակարդակ): Ֆիլիպսի կորի տեղաշարժերը գնաճի սպասվող տեմպի (π^e) փոփոխություններ և առաջարկի շոկեր (ε): Դեպք՝ գործազրկության փաստացի մակարդակը համընկնում է բնական մակարդակին և չկան շոկեր: Դեպք՝ գործազրկության փաստացի մակարդակը շեղվում է բնականից: Սպասումները և գնաճի իներցիան: Հարմարվողական (ադապտիվ) սպասումները: Սպասվող ինֆլացիայի տեմպը հավասար է նախորդ տարվա գնաճի տեմպին: Ֆիլիպսի կորի հավասարում $\pi = \pi_{-1} - \beta (U - U^*) + \varepsilon$: Պահանջարկի գնաճ: Առաջարկի գնաճ: Ֆիլիպսի երկարաժամկետ, ուղղահայաց կորը: Գործազրկության բնական կայուն մակարդակի (թողարկման բնական կայուն մակարդակ) պայմաններում գնաճի տեմպի փոփոխությունները չեն առաջացնում գործազրկության մակարդակի փոփոխություններ:

Երկարաժամկետում ամբողջական պահանջարկի խթանումը (սովորաբար փողի առաջարկի աճի միջոցով) չի հանգեցնում գործազրկության մակարդակի ու իրական ՀՆԱ-ի էական փոփոխությունների և արտացոլվում է հիմնականում գների աճի վրա: Կարճաժամկետում ամբողջական պահանջարկի խթանումը (դրամավարկային, հարկաքյուցետային քաղաքականությունների միջոցառումներ) ավելացնում է իրական ՀՆԱ-ն, կրճատում գործազրկության մակարդակը, ավելացնում գնաճը: Գնաճի և գործազրկության միջև ընտրության հիմնախնդիրը կարճաժամկետում: Հակագնաճային քաղաքականությունը: Գնաճի տեմպերի իջեցումը, գնաճի դեմ պայքարը (տնտեսական քաղաքականություն): Ըստ Ֆիլիպսի կարճաժամկետ կորի՝ հակագնաճային քաղաքականությունը հանգեցնում է գործազրկության աճի և թողարկման կրճատմանը (տընտեսությունը տեղաշարժվում է Ֆիլիպսի կորի երկայնքով): Պետական ծախսերի կամ փողի առաջարկի կրճատումը իջեցնում է գների

մակարդակը, անվանական աշխատավարձը մնում է նույնը (ամրագրված է աշխատանքային պայմանագրերում), ֆիրմաների շահույթը ընկնում է, կրճատում են թողարկման ծավալները, կրճատվում է զբաղվածությունը: ՀՆԱ-ի կորուստ: Կորուստների և գնաճի դեմ պայքարի արդյունքների հարաբերակցություն (կորստի գործակից): Տարեկան իրական ՀՆԱ-ի քանի՞ տոկոսը պետք է զոհաբերել գնաճը մեկ տոկոսային կետով իջեցնելու համար: Կորստի գործակիցի հաշվարկը ցիկլիկ գործազրկության կուտակային ցուցանիշի և գնաճի կրճատման մեծության միջոցով՝ որպես հարաբերակցություն (տոկոսային կետերով): Գնաճը իջեցնելու դեպքում ի՞նչ մեծությամբ և ի՞նչ ժամկետով պետք է աճի գործազրկության մակարդակը: Ամբողջական առաջարկը խթանող տնտեսական քաղաքականությունը: Հարկային դրույքաչափերի իջեցումը: Լաֆֆերի կորը: Արտադրության ընթացիկ ծավալների խթանման միջոցառումները: Արտադրության աճի տեմպի երկարաժամկետ բարձրացման միջոցառումները: Առաջարկի տնտեսագիտության քննադատությունը:

Թեմա 11. Տնտեսական աճի հայեցակարգը և գործոնները: Սուլուի տնտեսական աճի մոդելը

Դասախոսության ծրագիրը: Տնտեսական զարգացումը: Տնտեսական աճի հայեցակարգը: Կողմ և դեմ փաստարկներ: Տնտեսական աճի չափման մոտեցումներն ու ցուցանիշները: Տնտեսական աճի տեսակները: Տնտեսական աճի գործոնները: Տնտեսական աճը բացատրող մոդելների նկարագրությունը: Ինչո՞ւ են որոշ երկրներ հարուստ, որոշ երկրներ աղքատ: Տնտեսական աճի քեյնսյան և դասական մոդելների ընդհանուր բնութագիրը: Էկզոգեն ու էնդոգեն աճի մոդելները: Սուլուի տնտեսական աճի նորդասական մոդելը: Մոդելի նախապայմանները: Կապիտալի կայուն պաշարի ձևավորումը: Կապիտալի կուտակումը: Խնայողության նորմի փոփոխությունները: Բնակչության

աճի, տեխնոլոգիական առաջադիմության ազդեցությունը կապիտալազինվածության կայուն մակարդակի վրա: Բնակչությունն աճում է n կայուն տեմպով, և կա տեխնոլոգիական առաջադիմություն՝ g կայուն տեմպով, կայուն հավասարակշռության վիճակում Սոլուի մոդելի հիմնական փոփոխականների վարքը (արդյունքներ): Կապիտալի կուտակման ուսկյա կանոնով մակարդակը: Տնտեսական աճի աղբյուրների հաշվարկման մեթոդները: Սոլուի մնացորդը:

Տնտեսական զարգացումը (որակական փոփոխություններ տնտեսությունում): Տնտեսական աճը (քանակական փոփոխություններ տնտեսությունում): Միավոր ժամանակահատվածում իրական ՀՆԱ հավելածի տեմպ: Միավոր ժամանակահատվածում մեկ շնչին ընկնող իրական ՀՆԱ հավելածի տեմպ: Մեկ շնչին ընկնող իրական ՀՆԱ-ն նաև տնտեսության զարգացման և կենսամակարդակի միջին ցուցիչ է): Իրական ՀՆԱ բացարձակ աճ ($\Delta Y_t = Y_t - Y_{t-1}$): Իրական ՀՆԱ աճի տեմպ ($\Delta Y_t = \frac{Y_t}{Y_{t-1}} \times 100\%$): Իրական ՀՆԱ հավելածի տեմպ ($\Delta Y_t = \frac{Y_t - Y_{t-1}}{Y_{t-1}} \times 100\%$ կամ $\Delta Y_t = \frac{Y_t}{Y_{t-1}} \times 100\% - 100\%$): Տնտեսական աճի տեսությունը ուսումնասիրում է երկարաժամկետ միտումներ: Էքստենսիվ տնտեսական աճը ենթադրում է արտադրության գործոնների քանակական ավելացում, նախկին տեխնոլոգիական հիմքի վրա (աշխատանքի անփոփոխ միջին արտադրողականություն): Ինտենսիվ տնտեսական աճ (ավելի կատարելագործված արտադրության գործոնների և տեխնոլոգիաների օգտագործում, աշխատանքի փոփոխվող միջին արտադրողականություն): Տնտեսական աճը պայմանավորող առաջարկի, պահանջարկի, բաշխման գործոնները: Տնտեսական աճը զսպող գործոնները: Տնտեսական աճի մոդելները իրական տնտեսական գործընթացների վերացական, պարզեցված արտացոլումն են՝ մաթեմատիկական հավասարումների կամ գրաֆիկների տեսքով: Տնտեսական աճի քեյնսյան մոդելները: Կարճաժամկետ հավասարակշռության մոդել-

ների տրամաբանությունը, նախապայմանները՝ ոչ ճկուն գներ (հաստատուն գներ), սուբյեկտների ստատիկ սպասումներ, փոխադարձ ոչ փոխարինելի արտադրության գործոններ, կապիտալի կայուն սահմանային արտադրողականություն, աշխատանքը դեֆիցիտ չէ, ներդրումը ռազմավարական փոփոխական է: Տնտեսական աճի դասական մոդելները, նախապայմաններ՝ բազմագործոն արտադրական ֆունկցիաներ (մասնավորապես, Կոբ-Դուգլասի արտադրական ֆունկցիա (աշխատանքի և կապիտալի առաձգականության գործակիցների գումարը հավասար է մեկի)), կայուն հատույց մասշտաբից, ինքնակարգավորման մեխանիզմ, երկարաժամկետ հավասարակշռության հաստատում: Էկզոգեն աճի մոդելները (տնտեսական աճը որոշվում է արտաձին, տրված գործոններով): Էնդոգեն աճի մոդելները (տնտեսական աճը որոշվում է ներծին, մոդելի ներսում որոշվող գործոններով): Էկզոգեն աճի մոդելներում տեխնոլոգիական առաջադիմությունը տրված է: Էնդոգեն աճի մոդելները տեխնոլոգիական առաջադիմությունը բացատրող մոդելներ են, տեխնոլոգիական առաջադիմությունը ծնվում է մոդելի ներսում: Տնտեսական աճի Սոլոուի մոդելը (նորդասական, էկզոգեն աճի մոդել, 1956թ., նաև Սոլոու-Սվանի մոդել): Տնտեսական աճը բացատրվում է առաջարկի գործոններով (աշխատանքային ռեսուրսների քանակ ու որակ, հիմնական կապիտալի ծավալ, տեխնոլոգիա), վերլուծվում են տնտեսության կրած փոփոխությունները ժամանակի ընթացքում: Դինամիկ վերլուծության միջոցով պարզվում է կապիտալի կուտակման, բնակչության աճի և տեխնոլոգիական առաջադիմության ազդեցությունը տնտեսական աճի վրա: Սոլոուի մոդելի օգնությամբ դիտարկվում է տնտեսական քաղաքականության ազդեցությունը կենսամակարդակի բարելավման վրա: Սոլուի մոդելի նախապայմանները՝ կատարյալ մրցակցություն, գների ճկունություն, ռեսուրսների լրիվ զբաղվածություն, ռեսուրսների փոխադարձ փոխարինելիություն, կայուն հատույց մասշտաբից, կապիտալի նվազող սահմանային արտադրողականություն, դուրսգրման կայուն

նորմ, ներդրումային լազի բացակայություն: Շուկայական տնտեսության սուբյեկտներ են արտադրողներն ու սպառողները (պետությունը չի դիտարկվում որպես սուբյեկտ): Կապիտալի կուտակումն ու բնակչության աճը Սոլոուի մոդելում: Ապրանքների առաջարկն ու արտադրական ֆունկցիան: $Y=F(K,L)$, ցանկացած դրական z -ի համար՝ $zY=F(zK,zL)$: Եթե $z=1/L$, $Y/L=F(K/L, 1)$, $Y/L=y$, $K/L=k$: $y=f(k)$ -ն արտադրողականության և կապիտալազինվածության փոխադարձ կապի ֆունկցիան է՝ առաջարկը մեկ աշխատողի հաշվով (գրաֆիկական ներկայացում): Արտադրական ֆունկցիայի գրաֆիկի թեքության անկյան տանգենտը $MPK=f'(k+1)-f'(k)$: k -ն ավելանում է 1-ով, y -ն ավելանում է MPK -ով: Կապիտալի նվազող սահմանային արտադրողականությունը: Ապրանքների պահանջարկն ու սպառման ֆունկցիան Սոլոուի մոդելում: $y=c+i$ (պահանջարկը մեկ աշխատողի հաշվով): Եկամուտը բաժանվում է սպառման և խնայողությունների միջև (համապատասխան խնայողության (կուտակման) s նորմին): $c=(1-s)y$, $y=c+i=(1-s)y+i$, $i=sy$: Հավասարակշռության պայմաններում $i=s$ և համամասնական է y եկամտին: $f(k)=c+i$ կամ $f(k)=i/s$: s -ը որոշում է y -ի բաժանումը i -ի և c -ի միջև k -ի ցանկացած արժեքի դեպքում: $y=f(k)$, $i=sf(k)$, $c=(1-s)f(k)$: Կապիտալի կուտակումն ու կայուն վիճակը: d -ն կապիտալի դուրսգրման նորմն է, dk -ն կապիտալի մաշվածքի մեծությունը (համամասնական է կապիտալի ծավալին): Ներդրումները, մաշվածքի չափը, կապիտալազինվածության կայուն մակարդակը (գրաֆիկական ներկայացում): $\Delta k=i-dk$, $\Delta k=sf(k)-dk$: Երկարաժամկետ հավասարակշռության k^* կետը (կապիտալազինվածության հավասարակշռված (կայուն) մակարդակ), $\Delta k=0$, $sf(k)=dk$: Կապիտալի կայուն պաշարին մոտենալը, թվային օրինակ՝ $y=k^{1/2}$: Խնայողության ազդեցությունը աճի վրա: Խնայողության նորմի աճ s_1 -ից s_2 , ներդրումների կորի դեպի վեր տեղաշարժ՝ $s_1f(k)$ դիրքից $s_2f(k)$ (գրաֆիկական ներկայացում): Արագ աճի ժամանակահատվածը (k_1^* -ից k_2^*): Նոր կայուն վիճակը (k_2^*), ավելի բարձր կապիտալազինվածությամբ և ավելի բարձր աշխատանքի արտադրո-

դականությամբ: Բնակչության աճը՝ n կայուն տեմպով: Ներդրումների և դուրսգրման հետ միասին կապիտալազինվածության վրա ազդող նոր գործոնը: $\Delta k = i - dk - nk$ կամ $\Delta k = i - (d+n)k$: Բնակչության աճով կայուն վիճակ՝ $\Delta k = sf(k) - (d+n)k = 0$, $sf(k) = (d+n)k$: Բնակչության աճի ազդեցությունը (գրաֆիկական ներկայացում): Բարձր n , փոքր k , ցածր y : Բնակչության աճի դեպքում կապիտալազինվածությունը կայուն պահելու համար կապիտալը պետք է աճի բնակչության աճի նույն տեմպով ($\Delta Y/Y = \Delta L/L = \Delta K/K = n$): Տեխնոլոգիական առաջադիմությունը Սոլոուի մոդելում: Աշխատանքի արդյունավետությունը: $Y = F(K, LE)$, որտեղ E -ն աշխատանքի միավորի արդյունավետությունն է, LE -ն կայուն արդյունավետությամբ աշխատանքի պայմանական միավորների քանակությունը: Տեխնոլոգիական առաջադիմությունը՝ աշխատանքի E արդյունավետության կայուն g տեմպով աճի միջոցով: Աշխատողների L թվաքանակի n տեմպով աճը, աշխատանքի միավորի E արդյունավետության g տեմպով աճը, LE -ի $(n+g)$ տեմպով աճը: k' -ը կապիտալի քանակությամբ է կայուն արդյունավետությամբ աշխատանքի միավորի հաշվով (գրաֆիկական ներկայացում), $k' = K/LE$, $y' = Y/LE$: Տեխնոլոգիական առաջընթացով կայուն վիճակ $sf(k') = (d+n+g)k'$: Կապիտալազինվածության k^* կայուն մակարդակը հավասարակշռում է, մի կողմից, կապիտալազինվածությունը բարձրացնող ներդրումների ազդեցությունը, մյուս կողմից՝ աշխատանքի արդյունավետ միավորների հաշվով կապիտալի մակարդակը իջեցնող դուրսգրման, աշխատողների թվաքանակի աճի և տեխնոլոգիական առաջադիմության ազդեցությունը: Տեխնոլոգիական առաջադիմության հետևանքները: k^* կայուն վիճակում՝ տեխնոլոգիական առաջադիմության պայմաններում, K -ն ու Y -ը կաճեն $(n+g)$ տեմպով: Մեկ աշխատողի հաշվով K/L -ն ու Y/L -ը կաճեն g տեմպով (ի տարբերություն բնակչության աճի դեպքի): Սոլոուի մոդելում ռեսուրսների լրիվ զբաղվածության պայմաններում՝ հավասարակշռության վիճակում, անընդմեջ տնտեսական աճի ապահովման բացատրությունը: Բնակչությունն աճում է n կայուն տեմպով, և կա տեխնոլոգիական առաջադիմություն g կայուն

տեմպով: Արդյունքներն են. L -ը աճում է n տեմպով, LE -ն աճում է $(n+g)$ տեմպով, K -ն աճում է $(n+g)$ տեմպով, $k' = K/LE$ -ն աճում է 0 տեմպով, $k = K/L$ -ն աճում է g տեմպով, Y -ն աճում է $(n+g)$ տեմպով, $y' = Y/LE$ -ն աճում է 0 տեմպով, $y = Y/L$ -ն աճում է g տեմպով: Կապիտալի կուտակման ոսկյա կանոնով մակարդակը: Կապիտալի կուտակման ամենաբարենպաստ մակարդակը, որն ապահովում է հավասարակշիռ տնտեսական աճ՝ սպառման առավելագույն մակարդակով (k^{**}, c^{**}): Կայուն վիճակների համեմատությունը: Ոսկյա կանոնին համապատասխանող կապիտալազինվածության k^{**} մակարդակում՝ $MPK=d$ (կապիտալի սահմանային արդյունքը = դուրսգրման նորմին): Բնակչության աճի ու տեխնոլոգիական առաջադիմության պայմաններում $MPK=d+n+g$: Տնտեսական աճի աղբյուրների հաշվարկը: Արտադրության գործոնների ծախսերի աճը: Կապիտալի աճը: Աշխատանքի աճը: Կապիտալի և աշխատանքի աճը: Տեխնոլոգիական առաջադիմության չափը: Գործոնների ամբողջական արտադրողականությունը: Սոլոուի մնացորդը՝ $\Delta A/A = \Delta Y/Y - \alpha \Delta K/K - (1 - \alpha) \Delta L/L$: Պետք է տարբերել աճի քանակական ցուցանիշները աճի որակից, իսկ տնտեսական աճը չպետք է ինքնանպատակ լինի: Պետք է որոշել՝ որ ոլորտներում, ինչի հաշվին է աճը ցանկալի, և ի՞նչ խնդիրներ է այն լուծելու:

Թեմա 12. Բաց տնտեսությունը: Կապիտալի միջազգային հոսքերը և առևտրային հաշվեկշիռը: Վճարային հաշվեկշիռը:

Փոքր, բաց տնտեսության մոդելը: Տնտեսական քաղաքականության ազդեցությունը փոքր, բաց տնտեսության վրա

Դասախոսության ծրագիրը: Բաց տնտեսությունը: Մակրոտնտեսական հիմնական նույնությունը բաց տնտեսությունում: Զուտ արտահանման (Nx) դերը: Կապիտալի միջազգային հոսքերը և առևտրային հաշվեկշիռը: Վճարային հաշվեկշիռի մակրոտնտեսական նշանակությունը, հոդվածները, կառուց-

վածքը: Խնայողությունն ու ներդրումը փոքր, բաց տնտեսությունում: Կապիտալի շարժունակությունը և համաշխարհային տոկոսադրույքը: Փոքր, բաց տնտեսության մոդելը: Ինչպե՞ս են քաղաքականություններն ազդում առևտրային հաշվեկշռի վրա: Ներքին հարկաբյուջետային քաղաքականությունը: Հարկաբյուջետային քաղաքականությունը արտասահմանում: Ներդրումային պահանջարկի փոփոխությունների գնահատումը փոքր, բաց տնտեսությունում:

Բաց ու փակ տնտեսությունների միջև հիմնական մակրոտնտեսական տարբերությունը: Բաց ու փակ տնտեսությունների Y արդյունքի ծախսային բաղադրիչները: Բաց տնտեսությունը՝ $Y=C+I+G+Ex-IM$, որտեղ $(C+I+G)$ -ն ներքին ծախսերն են (ներառյալ ներմուծման ծախսերը), Ex -ը արտահանման ծախսերը, IM -ը ներմուծման ծախսերը, $Ex-IM=Nx$ ՝ զուտ արտահանումը: $Y=C+I+G+Nx$, $Nx=Y-(C+I+G)$: Ֆինանսական և ապրանքների շուկաների կապը՝ $Y-C-G=I+Nx$, $S=I+Nx$, $S-I=Nx$, որտեղ Nx -ը ապրանքների և ծառայությունների զուտ արտահանումն է կամ առևտրային հաշվեկշիռը, $(S-I)$ -ն ներքին ազգային խնայողությունների ու ներքին ներդրումների տարբերությունը կամ զուտ կապիտալի արտահոսքը (արտաքին զուտ ներդրում): Փոքր, բաց տնտեսությունում դրական $(S-I)$ -ն և դրական Nx -ը (առևտրային ավելցուկ) ենթադրում են, որ համաշխարհային ֆինանսական շուկաներում երկիրը զուտ վարկատու է՝ արտահանման գերազանցում ներմուծմանը: Փոքր, բաց տնտեսությունում բացասական $(S-I)$ -ն և բացասական Nx -ը (առևտրային պակասուրդ) ենթադրում են, որ համաշխարհային ֆինանսական շուկաներում երկիրը զուտ փոխառու է՝ ներմուծման գերազանցում արտահանմանը: $(S-I)=0=Nx$ (հավասարակշռված առևտուր), արտահանման արժեքը=ներմուծման արժեքին: Առևտրային ավելցուկը ($EX > IM$, $Nx > 0$, $Y > C+I+G$, $S > I$, $(S-I) > 0$): Առևտրային պակասուրդը ($EX < IM$, $Nx < 0$, $Y < C+I+G$, $S < I$, $(S-I) < 0$): Հավասարակշռված առևտուրը ($EX = IM$, $Nx = 0$, $Y = C+I+G$, $S = I$, $(S-I) = 0$): Վճարային հաշ-

վեկշիռը որոշակի ժամանակահատվածում (սովորաբար մեկ տարում) տվյալ երկրի ռեզիդենտների (տնային տնտեսություններ, ֆիրմաներ, պետություն) և մնացյալ աշխարհի միջև տնտեսական բոլոր գործարքների (ընթացիկ գործառնություններ և գործառնություններ կապիտալի հետ) արդյունքների համակարգված գրանցումն է: Կրկնակի գրանցման սկզբունքը (ցանկացած գործարք ունի երկու կողմ): Վճարային հաշվեկշռի հիմնական հոդվածները (կրեդիտ, դեբետ): Վճարային հաշվեկշռի բաղկացուցիչ տարրերը՝ ընդհանրացված կառուցվածքը. I. ընթացիկ գործառնությունների հաշիվ (1. ապրանքային արտահանում, 2. ապրանքային ներմուծում, 3. ծառայությունների արտահանում (բացառությամբ վարկային ծառայությունների), 4. ծառայությունների ներմուծում (բացառությամբ վարկային ծառայությունների), 5. զուտ գործոնային եկամուտներ արտասահմանից, 6. զուտ ընթացիկ տրանսֆերտներ), II. կապիտալի շարժի և ֆինանսական գործառնությունների հաշիվ (7. կապիտալի ներհոսք, 8. կապիտալի արտահոսք), III. պաշտոնական պահուստների (ռեզերվներ) փոփոխություն: ԿԲ պաշտոնական պահուստները (ոսկի, արտարժույթ, ԱՄՆ-ում երկրի վարկային մասնաբաժին՝ գումարած փոխառության հատուկ իրավունքներ (SDR)): Միջազգային չափանիշներով ԿԲ պաշտոնական պահուստները բավարար են, եթե դրանց գումարը թույլ է տալիս վճարել ներմուծման միջին ամսական ծավալը առնվազն երեք ամիս: Ընթացիկ հաշվի մնացորդը (սալդո): Կապիտալի հաշվի մնացորդը (սալդո): Վճարային հաշվեկշռի մնացորդը (սալդո): ԿԲ գործառնությունները պաշտոնական պահուստների հետ:

Խնայողությունն ու ներդրումը փոքր, բաց տնտեսությունում (ֆինանսական շուկա): Կապիտալի կատարյալ շարժունակությամբ փոքր, բաց տնտեսություն՝ $r=r^*$: $Nx=(Y-C-G)-I$, $Nx=(Y-C(Y-T)-G)-I(r^*)$, որտեղ տրված են Y-ը, T-ն, G-ին, այսինքն տրված է S-ը, $Nx=S-I(r^*)$ (փոքր, բաց տնտեսության մոդելը): NX առևտրային հաշվեկշիռը կախված է այն փոփոխականներից, որոնք որոշում են խնայողու-

թյունները (S) և ներդրումները (I): Ինչպե՞ս է ներքին հարկաբյուջե-տային քաղաքականությունն ազդում առևտրային հաշվեկշռի վրա: Խթանող հարկաբյուջետային քաղաքականությունը փոքր, բաց տնտեսությունում (գրաֆիկական ներկայացում): Պետական գնում-ների աճը կամ հարկերի իջեցումը կրճատում է ազգային խնայողու-թյունները, ձևավորվում է առևտրային պակասուրդ: Nx-ը համաշ-խարհային տրված տոկոսադրույքի պայմաններում խնայողություն-ների և ներդրումների կորերի միջև տարբերությունն է: Որևէ մեծ, բաց տնտեսությունում իրականացվող հարկաբյուջետային քաղա-քականության ազդեցությունը համաշխարհային ֆինանսական շու-կայի և փոքր, բաց տնտեսության առևտրային հաշվեկշռի վրա (գրաֆիկական ներկայացումներ): Խթանող հարկաբյուջետային քաղաքականությունը մեծ, բաց տնտեսությունում: Պետական գնումների աճը կամ հարկերի իջեցումը կրճատում է մեծ, բաց տն-տեսության ազգային խնայողությունները, հետևաբար համաշխար-հային խնայողությունները, բարձրանում է համաշխարհային իրա-կան տոկոսադրույքը (r^*): Փոքր, բաց տնտեսությունում r^* -ը բարձ-րանում է, առաջանում է առևտրային ավելցուկ: Nx-ը համաշխար-հային ավելի բարձր տոկոսադրույքի պայմաններում խնայողու-թյունների և ներդրումների կորերի միջև տարբերությունն է: Փոքր, բաց տնտեսությունում ներդրումային պահանջարկի փոփոխու-թյունների ազդեցությունը առևտրային հաշվեկշռի վրա (գրաֆիկա-կան ներկայացում): Հարկային օրենսդրության փոփոխություններ՝ ներքին ներդրումները խթանելու համար (ներդրումների հարկային զեղչեր): Ներդրումների կորի դեպի աջ վերև տեղաշարժը (խնայո-ղության անփոփոխ ծավալ, առևտրային հաշվեկշռի պակասուրդ): Nx-ը համաշխարհային տրված տոկոսադրույքի պայմաններում խնայողությունների և ներդրումների կորերի միջև տարբերությունն է: Քաղաքականությունները, որոնք ավելացնում են խնայողություն-ները կամ կրճատում ներդրումները, հանգեցնում են առևտրային ավելցուկի: Քաղաքականությունները, որոնք կրճատում են խնայո-

դությունները կամ ավելացնում ներդրումները, հանգեցնում են առևտրային պակասուրդի: Ջուտ կապիտալի արտահոսքը ներքին խնայողությունների գերազանցումն է ներքին ներդրումներին: Առևտրային հաշվեկշիռը երկրի ապրանքների և ծառայությունների զուտ արտահանման դիմաց ստացված գումարն է: Ջուտ Կապիտալի արտահոսքը միշտ հավասար է առևտրային հաշվեկշռին ($S-I=Nx$):

Թեմա 13. Արժույթային շուկան: Հիմնական հասկացություններ:
Ազգային արժույթի անվանական փոխանակային կուրսը և իրական փոխանակային կուրսը: Մակրոտնտեսական քաղաքականության ազդեցությունը փոքր, բաց տնտեսության հավասարակշռված իրական փոխանակային կուրսի վրա

Դասախոսության ծրագիրը: Արժույթային համակարգը: Ազգային արժույթի անվանական փոխանակային կուրսը (փոխարժեք): Ազգային արժույթի լողացող (ճկուն) և ամրագրված փոխարժեքի ռեժիմները (համակարգեր): Իրական փոխարժեքը: Առևտրի պայման: Գնողունակության համարժեքությունը: Անվանական փոխարժեքը որոշող գործոնները երկարաժամկետում: Անվանական փոխարժեքի փոփոխության հավասարումը: Անվանական փոխարժեքը որոշող գործոնները կարճաժամկետում: Հավասարակշռված իրական փոխարժեքը: Հավասարակշռված իրական փոխարժեքը որոշող գործոնները փոքր, բաց տնտեսությունում: Իրական հավասարակշռված փոխարժեքի վրա երկրի, այլ երկրների հարկաբյուջետային քաղաքականության և ներդրումային պահանջարկի փոփոխության ազդեցությունը: Արտաքին առևտրի հովանավորչական քաղաքականության ազդեցությունը իրական հավասարակշռված փոխարժեքի վրա:

Անվանական փոխարժեքը (արժույթի փոխանակային կուրս) երկու երկրների արժույթների հարաբերական գինն է (մի արժույթի

գինը՝ արտահայտված մյուս արժույթի միավորներով): Տվյալ երկրից ապրանքների և ծառայությունների արտահանման աճը մեծացնում է ազգային արժույթի պահանջարկն արտասահմանում և միաժամանակ տվյալ երկրում ձևավորում է արտասահմանյան արժույթի առաջարկ: Համապատասխանաբար տվյալ երկիր ապրանքների և ծառայությունների ներմուծման աճը մեծացնում է երկրում արտասահմանյան արժույթի պահանջարկը և միաժամանակ ձևավորում է ազգային արժույթի առաջարկ արտասահմանցիների համար: Արտասահմանյան արժույթի ներքին պահանջարկի աճը իջեցնում է դրա պաշարները երկրի բանկերում: Արտահանումը թույլ է տալիս «աշխատել» արտասահմանյան արժույթ, որն անիրաժեշտ է ներմուծումը վճարելու համար: Ազգային արժույթի լողացող փոխարժեքը սահմանվում է արտարժույթի շուկայում՝ որպես արժույթի հավասարակշիռ արտաքին գին, արտարժույթի առաջարկի և պահանջարկի ազատ տատանումների արդյունքում: Ազգային արժույթի ամրագրված փոխարժեքը (սահմանվում է ԿԲ-ի կողմից): ԿԲ-ն պարտավորվում է սահմանված կուրսով գնել և վաճառել արտասահմանյան արժույթի ցանկացած քանակություն: Իրական փոխարժեքը (առևտրի պայման) հարաբերակցություն է, որով մի երկրի ապրանքները կարող են փոխանակվել մեկ այլ երկրի ապրանքների հետ (երկու երկրներում արտադրված ապրանքների հարաբերական գին): Անվանական և իրական փոխարժեքների միջև կախվածությունը: E (իրական փոխարժեք) = e (անվանական փոխարժեք) $\times P/P^*$ (գների մակարդակների հարաբերակցություն): P -ն՝ գների մակարդակն է երկրում՝ արտահայտված ազգային արժույթով, P^* -ը՝ գների մակարդակը արտասահմանում՝ արտահայտված արտասահմանյան արժույթով: Գնողունակության համարժեքությունը արժույթների փոխանակային կուրսերի մակարդակ է, որը հավասարեցնում է գնողունակությունը յուրաքանչյուր երկրում: Հաշվի են առնվում ազգային դրամական միավորների գնողունակության տարբերությունները: Անվանական փոխարժեքը որոշող գործոնները՝ $e = E \times P^*/P$: Անվանական փոխարժեքը կախված է իրական

փոխարժեքից և երկու երկրների գների մակարդակներից: Երկարաժամկետում արժույթների անվանական կուրսերը ճկուն են և արձագանքում են գների մակարդակի փոփոխություններին այնպես, որ արժույթների իրական կուրսերը մնում են անփոփոխ՝ ապահովելով գնողունակության համարժեքությունը: Եթե տվյալ երկրի գնաճի տեմպը գերազանցում է արտասահմանյան երկրի գնաճի (որի արժույթի հետ փոխանակվում է տվյալ երկրի արժույթը) տեմպը, ապա այլ հավասար պայմաններում ազգային արժույթը էժանանալու միտում ունի: Երկարաժամկետում անվանական փոխարժեքի փոփոխության հավասարումը ($\% \text{ փոփոխություն } e = \% \text{ փոփոխություն } E + \% \text{ փոփոխություն } P^* - \% \text{ փոփոխություն } P$): $\% \text{ փոփոխություն } e = \% \text{ փոփոխություն } E + (\pi^* - \pi)$: Երկու երկրների արժույթների միջև անվանական փոխարժեքի տոկոսային փոփոխությունը հավասար է՝ իրական փոխարժեքի տոկոսային փոփոխությանը գումարաձև դրանց գնաճի տեմպերի տարբերությունը: ԴՎՔ ազդեցությունը անվանական փոխարժեքի վրա (M-ի աճ, π -ի բարձրացում, e-ի նվազում): Որպես կանոն, փոխարժեքը փոփոխվում է ճիշտ այնքան, որքան անհրաժեշտ է տարբեր երկրների գների մակարդակների դինամիկայի տարբերությունը փոխհատուցելու համար: Անվանական փոխարժեքը որոշող գործոնները կարճաժամկետում: Կարճաժամկետում արժույթների անվանական կուրսերը, ինչպես և գները հարաբերականորեն կոշտ են, իսկ իրական կուրսերը փոփոխվում են (խախտելով արժույթների գնողունակության համարժեքությունը): Իրական փոխարժեքի փոփոխության արդյունքը (զուտ արտահանման և ամբողջական պահանջարկի մեծության տատանումներ): Ազգային արժույթի իրական փոխարժեքի ավելի ցածր մակարդակ, հայրենական ապրանքների հարաբերական էժանացում արտասահմանցիների համար, ներմուծվող ապրանքների հարաբերական թանկացում տեղական սպառողների համար, զուտ արտահանման ավելացում: Հակադարձ կապ զուտ արտահանման և իրական փոխարժեքի միջև՝ $N_x = N_x(E)$: Հավասարակշ-

ված իրական փոխարժեքը որոշող գործոնները փոքր, բաց տնտեսությունում (գրաֆիկական ներկայացում): Հավասարակշռված իրական փոխարժեքի մակարդակը համապատասխանում է խնայողությունների և ներդրումների տարբերությունը նշող ուղղահայաց գծի ու զուտ արտահանման դեպի աջ ներքև թեքված գրաֆիկի հատման կետին: $S-I(r^*)=N_x(E)$, տրված S (տրված է սպառման և հարկաբյուջետային ֆունկցիայով), տրված I (տրված է ներդրումային և համաշխարհային տոկոսադրույքի ֆունկցիայով), զուտ արտահանումը կախված է իրական փոխարժեքից: Հարկաբյուջետային քաղաքականությունը երկրի ներսում (գրաֆիկական ներկայացում): Խթանող հարկաբյուջետային քաղաքականությունը (G -ի ավելացում կամ T -ի իջեցում, S -ի կրճատում, r^* -ն անփոփոխ է, $I=I(r^*)$, I -ն անփոփոխ է, $(S - I)$ -ի կրճատում, կորի ձախ տեղաշարժ, E -ի բարձրացում, Ex -ի կրճատում, Im -ի ավելացում, N_x -ի կրճատում): Որևէ մեծ բաց տնտեսության հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը փոքր բաց տնտեսության վրա (գրաֆիկական ներկայացում): Խթանող հարկաբյուջետային քաղաքականությունը (G^* -ի ավելացում կամ T^* -ի իջեցում, S^* -ի կրճատում, r^* -ի բարձրացում, S -ն անփոփոխ է, $I=I(r^*)$, I -ի կրճատում, $(S - I)$ -ի ավելացում, կորի աջ տեղաշարժ, E -ի իջեցում, Ex -ի ավելացում, Im -ի կրճատում, N_x -ի ավելացում): Ներդրումային պահանջարկի փոփոխության ազդեցությունը հավասարակշռված իրական փոխարժեքի վրա փոքր, բաց տնտեսությունում (գրաֆիկական ներկայացում): Ներդրումների հարկային զեղչերը (S -ն անփոփոխ է, ներդրումային պահանջարկի ավելացում, I -ի ավելացում, $(S-I)$ -ի կրճատում, կորի ձախ տեղաշարժ, E -ի բարձրացում, Ex -ի կրճատում, Im -ի ավելացում, N_x -ի կրճատում): (Գրաֆիկական ներկայացում): Արտաքին առևտրի հովանավորչական քաղաքականության (ներմուծման վրա մաքսատուրքերի կամ քվոտաների սահմանում) ազդեցությունը իրական հավասարակշռված փոխարժեքի վրա (գրաֆիկական ներկայացում): Im -ի կրճատում, զուտ արտահանման պահանջարկի ավելացում, $N_x(E)$ կորի աջ վերև տեղաշարժ, E -ի բարձրացում, Ex -ի կրճատում, N_x -ի

կրճատում և հովանավորչական միջոցառումների հետևանքով Nx-ի հնարավոր ավելացման վերացում, S-ն անփոփոխ է, I-ն անփոփոխ: Հովանավորչական քաղաքականությունը հանգեցնում է ինչպես ներմուծման, այնպես էլ արտահանման ծավալների կրճատմանը:

Թեմա 14. Փոքր, բաց տնտեսության Մանդել-Ֆլեմինգի մոդելը: Տնտեսությունը կարճաժամկետում: Մանդել-Ֆլեմինգի մոդելը փոփոխվող գներով՝ որպես ամբողջական պահանջարկի տեսություն: Կարճաժամկետ և երկարաժամկետ հավասարակշռությունը փոքր, բաց տնտեսությունում

Դասախոսության ծրագիրը: Փոքր, բաց տնտեսության Մանդել-Ֆլեմինգի մոդելը Y-e հարթությունում: Փոքր, բաց տնտեսությունը փոխանակային լողացող կուրսի պայմաններում: Հարկաբյուջետային քաղաքականությունը: Դրամավարկային քաղաքականությունը: Արտաքին առևտրի հովանավորչական քաղաքականությունը: Փոքր, բաց տնտեսությունը փոխանակային հաստատագրված կուրսի պայմաններում: Փոխանակային հաստատագրված կուրսի համակարգի գործողության մեխանիզմը: Հարկաբյուջետային քաղաքականությունը: Դրամավարկային քաղաքականությունը: Արտաքին առևտրի հովանավորչական քաղաքականությունը: Մանդել-Ֆլեմինգի մոդելի հետևությունները: Տնտեսական քաղաքականության արդյունքները (շղթաները): Մանդել-Ֆլեմինգի մոդելը փոփոխվող գներով: Անցում կարճից երկար ժամանակահատվածին:

IS-LM մոդելի ձևափոխությունը փոքր, բաց տնտեսության համար: Մանդել-Ֆլեմինգի մոդելը: Դրամավարկային, հարկաբյուջետային հովանավորչական քաղաքականությունների ազդեցությունը ամբողջական եկամտի վրա կարճաժամկետում փոքր, բաց տնտեսությունում: Մոդելի երեք սկզբնական հավասարումները՝ IS,

LM, $r=r^*$: P-ն հաստատուն, E իրական փոխարժեքի փոփոխությունները համամասնական են e անվանական փոխարժեքի փոփոխություններին, $N_x=N_x(e)$, r ներքին իրական տոկոսադրույքը որոշվում է r^* համաշխարհային տոկոսադրույքի մակարդակով: Y ամբողջական եկամտի տատանումների պատճառների բացատրությունը: $Y-e$ (իրական համախառն եկամուտ-անվանական փոխարժեք) կորդինատային հարթությունը: Փոքր, բաց տնտեսության Մանդել-Ֆլեմինգի մոդելը (գրաֆիկական ներկայացում): Մոդելի երկու հավասարումները (IS^* , LM^*): LM^* կորի ստացումը: LM^* կորը ուղղահայաց է (r^* իրական տոկոսադրույքը կայուն է): LM^* հավասարումը որոշում է ամբողջական եկամուտը՝ անկախ փոխարժեքի մակարդակից: IS^* կորի ստացումը Քեյնսյան խաչի մոդելից և զուտ արտահանման գրաֆիկից: Փոքր, բաց տնտեսության Մանդել-Ֆլեմինգի գրաֆիկական մոդելում IS^* կորը թեքված է դեպի աջ՝ ներքև (e փոխարժեքի աճի դեպքում նվազում է զուտ արտահանումը, իսկ դրա հետ՝ նաև համախառն իրական եկամուտը): IS^* կորը հակադարձ կապ է ցույց տալիս իրական եկամտի և անվանական փոխարժեքի արժեքների միջև: Տնտեսության գործառնման բնույթը կախված է փոխարժեքի սահմանման ռեժիմից: Մանդել-Ֆլեմինգի մոդելում փոխանակային լողացող կուրսի դեպքում հարկաբյուջետային խթանող քաղաքականությունը IS^* կորը տեղաշարժում է աջ՝ վերև, փոխանակային կուրսը աճում է, բայց դա չի ազդում եկամտի մակարդակի վրա: Փոխանակային լողացող կուրսի դեպքում դրամավարկային խթանող քաղաքականությունը LM^* կորը տեղաշարժում է աջ, փոխանակային կուրսն իջնում է, և եկամուտն ավելանում: Մանդել-Ֆլեմինգի մոդելում փոխանակային լողացող կուրսի դեպքում փողի առաջարկի կրճատման դեպքում LM^* կորը տեղաշարժվում է ձախ, փոխանակային կուրսը բարձրանում է, և եկամուտը կրճատվում: Հովանավորչական քաղաքականությունը փոխանակային լողացող կուրսի պայմաններում զուտ արտահանման ֆունկցիայի գրաֆիկը տեղաշարժում է դեպի աջ՝ վերև: Մանդել-Ֆլեմինգի մոդելում IS^* կորի դեպի աջ՝ վերև տեղաշարժ: Փոխանակային

կուրսն աճում է, ամբողջական եկամուտը մնում է անփոփոխ: Փոքր, բաց տնտեսությունը փոխանակային հաստատագրված կուրսի պայմաններում: Փոխանակային հաստատագրված կուրսի ռեժիմի պայմաններում, եթե տվյալ երկրի արժույթի հավասարակշիռ փոխանակային կուրսը ցածր է հաստատագրվածից, վերավաճառողները շուկայում գնում են տվյալ երկրի արժույթ և ԿԲ-ից դրա դիմաց ստանում արտասահմանյան արժույթ: Մանդել-Ֆլեմինգի մոդելում փոխանակային հաստատագրված կուրսի ռեժիմի պայմաններում, եթե տվյալ երկրի արժույթի հավասարակշիռ փոխանակային կուրսը բարձր է հաստատագրվածից, վերավաճառողները ստանում են շահույթ՝ շուկայում արտասահմանյան արժույթ գնելով և հետո այն վաճառելով Կենտրոնական բանկին: Փոխանակային հաստատագրված կուրսի պայմաններում հարկաբյուջետային խթանող քաղաքականությունը IS* կորը տեղաշարժում է աջ: ԿԲ-ն պետք է մեծացնի փողի առաջարկը, որպեսզի պահպանի փոխանակային հաստատագրված կուրսը: Փոքր, բաց տնտեսության Մանդել-Ֆլեմինգի մոդելում փոխանակային հաստատագրված կուրսի պայմաններում դրամավարկային քաղաքականությունն իր սովորական իմաստով դառնում է անհնար: Հովանավորչական քաղաքականությունը փոխանակային հաստատագրված կուրսի պայմաններում: IS* կորը տեղաշարժվում է դեպի աջ՝ վերև: ԿԲ-ն փոխանակային կուրսը հաստատուն պահելու համար պետք է ավելացնի փողի առաջարկը: Արդյունքում ամբողջական եկամուտն ավելանում է: Մանդել-Ֆլեմինգի մոդելի հետևությունները (շղթաներ): Տնտեսական քաղաքականության ազդեցության արդյունքում Y-ի, e-ի, Nx-ի փոփոխությունների ուղղությունները փոխարժեքի լողացող ու հաստատագրված ռեժիմների պայմաններում: Մանդել-Ֆլեմինգի մոդելը փոփոխվող գներով՝ որպես ամբողջական պահանջարկի տեսություն: $r=r^*$, $Nx=Nx(E)$: Երկու հավասարում՝ IS*, LM*: P-ն իջնում է, M/P-ը ավելանում է, LM* կորը տեղաշարժվում է աջ, E-ն իջնում է, Y-ն աճում է: P-ի և Y-ի միջև հակադարձ կախվածությունը: Ամբողջ-

ջական պահանջարկի AD կորը: Կարճաժամկետ և երկարաժամկետ հավասարակշռությունը փոքր, բաց տնտեսությունում (հավասարակշռության K և C կետեր):

Առաջարկվող գրականություն և համացանցային աղբյուրներ

1. Ամբողջական պահանջարկի կառուցվածքային տեղաշարժերի վերլուծությունն ու կանխատեսումը ՀՀ-ում, մենագրություն (տ.գ.թ., պրոֆ. Ի.Տ. Տիգրանյանի ընդհանուր խմբագրությամբ և ղեկավարությամբ), Եր., «Տնտեսագետ», 2015, 212 էջ:

2. Մակրոտնտեսական վերլուծություն և կանխատեսում: Ուսումնական ձեռնարկ (ՀՊՏՀ, խմբ.՝ Ի. Տիգրանյան, Հ. Հովհաննիսյան, Եր., «Տնտեսագետ», 2011, 328 էջ):

3. Տնտեսության պետական կարգավորում, Ուս. ձեռնարկ (Պրոֆ. Ի. Տ. Տիգրանյանի ընդհանուր խմբագրությամբ և ղեկավարությամբ), Եր., «Տնտեսագետ», 2015, 590 էջ:

4. *Абель Э., Бернанке Б.* Макроэкономика: учебник для вузов. Глава 1; Глава 2-5-е изд., М., СПб.: Питер, 2011.

5. *Агапова Т.А., Серегина С.Ф.* Макроэкономика: учебник / Т.А. Агапова, С.Ф. Серегина, 10-е изд., перераб. и доп. М.: Московский финансово-промышленный университет «Синергия», 2013, 560 с. (Университетская серия).

6. *Антипина О.Н.* Макроэкономика: учебник / О.Н. Антипина, Н.А. Миклашевская, А.А. Никифоров; под общ.ред.д-ра экон. наук, проф.А.В.Сидоровича, М.: Издательство «Дело и Сервис», 2012, 496 с. (Учебники Московского государственного университета им. М.В. Ломоносова).

7. *Бланшар О.* Макроэкономика, Учебник, Второе издание, Перевод с английского под научной редакцией Л. Л. Любимова, Издателский дом Висшей школы экономики, Москва, 2015, 671с.

8. *Вымятина Ю.В., Борисов К.Ю., Пахнин М.А.,* Макроэкономика: учебник и практикум для бакалавриата и магистратуры,

Մ.: «Юрайт», 2018.

9. Государственное регулирование экономики: учебное пособие /С. Г. Капканщиков. 4-е изд., перераб. и доп., М.: КНОРУС, 2012. 528 с. (Для бакалавров).

10. *Мэнкью Н., Тейлор М.* Макроэкономика. 2-е изд., СПб.: «Питер», 2013, 560с.

11. Макроэкономика: уч. пособие, основные вопросы, Г. Л. Журавлева, Изд.центр РИОР, М., 2011, 127 с.

12. Macroeconomics, N. Gregory Mankiw, Harvard University, ninth edition, A Macmillan Education Imprint, New York, 2016, 642p.

Համացանցային աղբյուրներ

- www.armstat.am
- www.cba.am
- www.gov.am
- www.arlis.am
- www.minfin.am
- www.imf.org
- www.worldbank.org
- www.data.worldbank.org

Դասընթացի ուսումնամեթոդական և նյութատեխնիկական ապահովումը

- Առարկայական ծրագիր
- Քննական հարցաշար
- Գրականության ցանկ (դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, խնդրագրքեր, թեստերի ժողովածուներ)
- Էլեկտրոնային նյութեր (էլեկտրոնային գրքեր, ուսումնական ձեռնարկներ, հետազոտություններ, տեղեկատվական կայքեր, դասախոսությունների համառոտագրեր, սահիկաշարեր)

- Ուսանողների ինքնուրույն աշխատանքի համար հարցեր, թեստային առաջադրանքներ, խնդիրներ, հանձնարարություններ (վերլուծությունների կատարում, սահիկաշարերի պատրաստում):

Սեմինար պարապմունքների համար թեստային առաջադրանքների օրինակներ

1. AD-AS մոդելում երկրաժամկետ հավասարակշռությունը հաստատվում է.

- ա. LRAS, SRAS և ամբողջական պահանջարկի կորերի հատման կետում,
- բ. LRAS և ամբողջական պահանջարկի կորերի հատման կետում,
- գ. SRAS և ամբողջական պահանջարկի կորերի հատման կետում,
- դ. նշված պատասխանները ճիշտ չեն:

2. AD-AS մոդելում՝ փողի անփոփոխ առաջարկի պայմաններում, փողի շրջապտույտի արագացման հետևանքով.

- ա. ամբողջական պահանջարկի կորը տեղաշարժվում է դեպի աջ՝ վերև, երկրաժամկետում հավասարակշռությունը վերականգնվում է թողարկման ներուժային մակարդակի վրա,
- բ. ամբողջական պահանջարկի կորը տեղաշարժվում է դեպի ձախ՝ ներքև, կարճաժամկետում գների մակարդակը չի փոխվում,
- գ. ամբողջական պահանջարկի կորը տեղաշարժվում է դեպի ձախ՝ ներքև, գների մակարդակը բարձրանում է կարճաժամկետում,
- դ. բոլոր պատասխանները սխալ են:

3. LRAS կորը ներկայացնում է ամբողջական առաջարկը.

- ա. կարճաժամկետում և հորիզոնական տեսք ունի,

- բ. երկարաժամկետում և հորիզոնական տեսք ունի,
- գ. կարճաժամկետում և ուղղահայաց տեսք ունի,
- դ. երկարաժամկետում և ուղղահայաց տեսք ունի:

4. Եթե AD-AS մոդելում գների մակարդակը բարձրացել է, իսկ արտադրության ծավալը՝ նվազել, ապա դա հետևանք է.

- ա. ամբողջական պահանջարկի կորի տեղաշարժի դեպի աջ,
- բ. ամբողջական պահանջարկի կորի տեղաշարժի դեպի ձախ,
- գ. ամբողջական առաջարկի անբարենպաստ ցնցման,
- դ. ամբողջական առաջարկի բարենպաստ ցնցման:

5. AD-AS մոդելում եթե ԿԲ-ն կրճատի փողի առաջարկը, ապա.

- ա. ամբողջական պահանջարկի կորը կտեղաշարժվի դեպի ձախ՝ ներքև,
- բ. ամբողջական պահանջարկի կորը կտեղաշարժվի դեպի աջ՝ վերև,
- գ. ամբողջական պահանջարկի կորը չի տեղաշարժվի,
- դ. ամբողջական առաջարկի կարճաժամկետ կորը կտեղաշարժվի դեպի ձախ՝ վերև:

6. AD-AS մոդելում՝ փողի անփոփոխ առաջարկի պայմաններում, փողի շրջապտոպի արագացման հետևանքով.

- ա. AD կորը տեղաշարժվում է դեպի ձախ՝ ներքև և իրական ՀՆԱ-ն աճում է կարճաժամկետում,
- բ. AD կորը տեղաշարժվում է դեպի աջ՝ վերև և իրական ՀՆԱ-ն աճում է կարճաժամկետում,
- գ. AD կորը չի տեղաշարժվում,
- դ. AD կորը տեղաշարժվում է դեպի ձախ՝ ներքև և գների մակարդակն ավելանում է կարճաժամկետում:

7. Քեյնսյան խաչի մոդելը բացահայտում է, որ.

- ա. պետական ծախսերի, հարկերի փոփոխությունը բազմապատկիչ ներգործություն են ունենում եկամտի վրա,

- բ. պետական ծախսերի, հարկերի փոփոխությունը ներգործություն չունեն եկամտի վրա,
- գ. պետական ծախսերի փոփոխությունը ներգործություն ունի եկամտի վրա, իսկ հարկերի փոփոխությունը ոչ,
- դ. հարկերի փոփոխությունը ներգործություն ունի եկամտի վրա, իսկ պետական ծախսերի փոփոխությունը ոչ:

8. Ցնցումները, կապված IS կորի հետ առաջանում են.

- ա. փողի նկատմամբ պահանջարկի փոփոխություններով,
- բ. ապրանքների ու ծառայությունների նկատմամբ առաջարկի էկզոգեն փոփոխություններով,
- գ. ապրանքների ու ծառայությունների նկատմամբ պահանջարկի էկզոգեն փոփոխություններով,
- դ. բոլոր պատասխանները սխալ են:

9. IS-LM մոդելում փողի առաջարկի աճը LM կորը տեղաշարժում է դեպի.

- ա. ձախ՝ վերև, եկամուտն աճում է, իսկ տոկոսադրույքը կրճատվում,
- բ. աջ՝ ներքև, եկամուտն աճում է, իսկ տոկոսադրույքը կրճատվում,
- գ. աջ՝ ներքև, եկամուտն աճում է, իսկ տոկոսադրույքը չի փոխվում,
- դ. բոլոր պատասխանները սխալ են:

10. IS-LM մոդելում զսպող հարկաբյուջետային քաղաքականությունը IS կորը տեղաշարժում է ձախ, որը.

- ա. կրճատում է եկամուտը և իջեցնում է տոկոսադրույքը,
- բ. ավելացնում է եկամուտը և իջեցնում է տոկոսադրույքը,
- գ. չի առաջացնում եկամտի հավասարակշիռ մակարդակի փոփոխություն,
- դ. չի առաջացնում տոկոսադրույքի հավասարակշիռ մակարդակի փոփոխություն:

11. IS-LM մոդելը ցույց է տալիս.

ա. դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականություններն ազդում են եկամտի հավասարակշիռ մակարդակի վրա,

բ. պետական ծախսումների աճը ավելացնում է ՀՆԱ-ն,

գ. հարկերի աճը կրճատում է ՀՆԱ-ն,

դ. բոլոր պատասխանները ճիշտ են:

12. Քեյնսյան խաչի մոդելից հետևում է, որ պետական ծախսերի բազմապատկիչը.

ա. հավասար է մեկի,

բ. մեծ է մեկից,

գ. փոքր է մեկից,

դ. հավասար է զրոյի:

13. IS-LM մոդելում IS և LM կորերի հատման կետում.

ա. իրական ծախսերը հավասար են պլանավորվողին,

բ. փողի իրական պաշարների պահանջարկը հավասար է առաջարկին,

գ. միաժամանակյա հավասարակշռություն է ապրանքների ու ծառայությունների և փողի շուկաներում,

դ. բոլոր պատասխանները ճիշտ են:

14. Երբ գների մակարդակն իջնում է, այլ հավասար պայմաններում.

ա. սպառման ծավալները կրճատվում են,

բ. սպառման ծավալներն ավելանում են,

գ. հայրենական ապրանքներն արտասահմանյանի համեմատությամբ թանկանում են,

դ. ներդրումների ծավալը կրճատվում է:

15. IS-LM մոդելում ΔG չափով պետական ծախսերի աճը IS կորը տեղաշարժում է.

ա. աջ-վերև $\Delta G/(1-MPC)$ չափով,

- բ. աջ-վերև $MPC/(1-MPC)$ չափով,
- գ. ձախ-ներքև $\Delta G/(1-MPC)$ չափով,
- դ. ձախ-ներքև $MPC/(1-MPC)$ չափով:

16. Տնտեսությունը փոքր բաց է կապիտալի կատարյալ շարժունակությամբ, եթե այն.

- ա. ներկայացնում է համաշխարհային շուկայի մեծ բաժինը,
- բ. համաշխարհային շուկայի մաս չէ,
- գ. ներկայացնում է համաշխարհային շուկայի ոչ մեծ բաժինը և ծայրահեղ աննշան ներգործություն է ունենում համաշխարհային տոկոսադրույքի վրա,
- դ. բոլոր պատասխանները սխալ են:

17. Փակ տնտեսության ֆինանսական շուկայում իրական տոկոսադրույքը փոփոխվում է՝ հավասարակշռելով.

- ա. սպառումն ու զուտ արտահանումը,
- բ. պետական գնումներն ու անուղղակի հարկերը,
- գ. խնայողություններն ու ներդրումները,
- դ. բոլոր պատասխանները ճիշտ են:

18. Կապիտալի կատարյալ շարժունակությամբ փոքր, բաց տնտեսությունում իրական տոկոսադրույքը հավասարվում է.

- ա. փոխարժեքին,
- բ. համաշխարհային ֆինանսական շուկայի իրական տոկոսադրույքին,
- գ. գնաճի տեմպին:
- դ. գների ընդհանուր մակարդակին:

19. Համաշխարհային իրական տոկոսադրույքը որոշվում է.

- ա. որևէ մեծ բաց տնտեսության փոխանակային կուրսով,
- բ. համաշխարհային խնայողությունների և համաշխարհային ներդրումների հավասարակշռությամբ,
- գ. որևէ մեծ բաց տնտեսության խնայողությունների և զուտ արտահանման հարաբերակցությամբ,

դ. որևէ մեծ բաց տնտեսության ներդրումների և զուտ արտահանման հարաբերակցությամբ:

20. Փոքր, բաց տնտեսությունում ազգային խնայողության մեծությունը կախված է.

- ա. դրամավարկային քաղաքականությունից,
- բ. հովանավորչական քաղաքականությունից,
- գ. հարկաբյուջետային քաղաքականությունից,
- դ. բոլոր պատասխանները սխալ են:

21. Փոքր, բաց տնտեսությունում ներքին ներդրումների ծավալը կախված է.

- ա. համաշխարհային իրական տոկոսադրույքից,
- բ. ներքին իրական տոկոսադրույքից,
- գ. գների ընդհանուր մակարդակից,
- դ. պետական գնումների և սպառման ծավալի տարբերությունից:

22. Եթե բաց տնտեսությունում թողարկման մեծությունը (Y) գերազանցում է ներքին ծախսերը (C+I+G), ապա.

- ա. երկիրն արտահանում է տարբերությունը, և զուտ արտահանման մեծությունը դրական է,
- բ. երկիրն արտահանում է տարբերությունը, և զուտ արտահանման մեծությունը բացասական է,
- գ. երկիրը ներմուծում է տարբերությունը, և զուտ արտահանման մեծությունը դրական է,
- դ. բոլոր պատասխանները սխալ են:

23. Որևէ մեծ, բաց տնտեսության խթանող հարկաբյուջետային քաղաքականությունը կրճատում է համաշխարհային խնայողությունները, համաշխարհային տոկոսադրույքը բարձրանում է.

- ա. փոքր, բաց տնտեսության ներդրումները ավելանում են, S-I տարբերությունը ավելանում է, զուտ արտահանումը կրճատվում է,

բ. փոքր, բաց տնտեսության ներդրումները կրճատվում են, S-I տարբերությունը ավելանում է, զուտ արտահանումը ավելանում է,

գ. փոքր, բաց տնտեսությունում փոփոխություններ չեն առաջանում,

դ. ճիշտ պատասխանը նշված չէ:

24. Ազգային հաշիվների հիմնական նույնության գրառման $S-I=Nx$ ձևը հաստատում է, որ.

ա. արտաքին զուտ ներդրումները (S-I) միշտ մեծ են առևտրային հաշվեկշռից (Nx),

բ. արտաքին զուտ ներդրումները (S-I) միշտ փոքր են առևտրային հաշվեկշռից (Nx),

գ. արտաքին զուտ ներդրումների (S-I) և առևտրային հաշվեկշռի (Nx) միջև կապ չկա,

դ. արտաքին զուտ ներդրումները(S-I) միշտ հավասար են առևտրային հաշվեկշռին (Nx):

25. Երկրի ներսում վարվող խթանող հարկաբյուջետային քաղաքականությունը կրճատում է ազգային խնայողությունը.

ա. իրական փոխանակային կուրսի հավասարակշիռ արժեքը բարձրանում է, և դրա համար էլ երկրում արտադրված ապրանքները էժանանում են դրսի համար,

բ. իրական փոխանակային կուրսի հավասարակշիռ արժեքը բարձրանում է, և երկրում արտադրված ապրանքները թանկանում են դրսի համար,

գ. անվանական տոկոսադրույքը կնվազի,

դ. բոլոր պատասխանները սխալ են:

26. Եթե $S-I=Nx$ հավասարման մեջ արտաքին զուտ ներդրումներն (S-I) ու առևտրային հաշվեկշիռը (Nx) բացասական են, ապա երկիրն ունի առևտրային հաշվեկշռի մնացորդի պակասուրդ և.

ա. պարտք է վերցնում համաշխարհային ֆինանսական շուկաներից՝ ներմուծելով ավելի շատ ապրանքներ, քան արտահանում,

բ. պարտք է տալիս համաշխարհային շուկաներին և ներմուծում է ավելի շատ ապրանքներ,

գ. պարտք է տալիս համաշխարհային ֆինանսական շուկաներին,

դ. ճիշտ պատասխանները նշված չեն:

27. Եթե որևէ մեծ բաց տնտեսությունում պետական գնումներն ավելանան, ապա.

ա. այդ երկրում ազգային խնայողությունները կավելանան, և համաշխարհային իրական տոկոսադրույքը կիջնի,

բ. այդ երկրում ազգային խնայողությունները կկրճատվեն, և համաշխարհային իրական տոկոսադրույքը կբարձանա,

գ. դա չի ազդի համաշխարհային իրական տոկոսադրույքի վրա,

դ. բոլոր պատասխանները սխալ են:

28. Եթե համաշխարհային ֆինանսական շուկայում իրական տոկոսադրույքը բարձրանա, ապա փոքր բաց տնտեսությունում տվյալ՝ ավելի բարձր, տոկոսադրույքի պայմաններում.

ա. խնայողություններն ավելի քիչ են, քան ներդրումները, և Nx-ը կլինի դրական,

բ. խնայողություններն ավելի շատ են, քան ներդրումները, և Nx-ը կլինի դրական,

գ. խնայողություններն ավելի քիչ են, քան ներդրումները, և Nx-ը կլինի բացասական,

դ. բոլոր պատասխանները ճիշտ են:

29. Փողի բազան.

ա. ցլահանձ և ժամկետային ավանդների հանրագումարն է,

բ. փողի առաջարկի և փողի բազմարկչի արտադրյալն է,

գ. բնակչության ձեռքի կանխիկ փողի ու բանկային պահուստներում առկա փողի հանրագումարն է (C+R),
դ. կանխիկ փողի և ընթացիկ հաշիվներում առկա փողի հանրագումարն է:

30. Մանդել-Ֆլեմինգի մոդելի հետևություններից մեկն այն է, որ տնտեսության գործառնման բնույթը կախված է.

ա. գների ճկունությունից,
բ. աշխատավարձի ճկունությունից,
գ. արտարժույթի փոխանակային կուրսի սահմանման ռեժիմից,
դ. բոլոր պատասխանները ճիշտ են:

31. Մանդել-Ֆլեմինգի մոդելը կառուցվում է կորդինատային հետևյալ հարթությունում.

ա. Y-e (իրական համախառն եկամուտ-անվանական փոխարժեք),
բ. Y-r (իրական համախառն եկամուտ-իրական տոկոսադրույք),
գ. I-r (ներդրումներ-իրական տոկոսադրույք),
դ. Nx-E (զուտ արտահանում-իրական փոխարժեք):

32. Փողի առաջարկը.

ա. փողի բազայի և փողի բազմարկչի հարաբերությունն է,
բ. ցպահանջ և ժամկետային ավանդների հանրագումարն է,
գ. կանխիկ փողի և փողի բազայի հանրագումարն է,
դ. կանխիկ փողի և ընթացիկ հաշիվներում առկա փողի հանրագումարն է:

33. Մանդել-Ֆլեմինգի մոդելում զուտ արտահանումը (Nx) կախված է.

ա. r^* համաշխարհային տոկոսադրույքից,
բ. e անվանական փոխարժեքից,
գ. իրական աշխատավարձից,
դ. գործազրկության մակարդակից:

34. Փոքր, բաց տնտեսության Մանդել-Ֆլեմինգի գրաֆիկական

մոդելում LM* կորը ուղղահայաց է, քանի որ.

- ա.իրական տոկոսադրույքը փոփոխվում է,
- բ.անվանական տոկոսադրույքը փոփոխվում է,
- գ.իրական տոկոսադրույքը կայուն է,
- դ.գների մակարդակը փոփոխվում է:

35. Փողի քանակական տեսության հավասարման համաձայն, երկարաժամկետում.

- ա. փողի առաջարկի փոփոխությունները հանգեցնում են ՀՆԱ իրական ծավալի փոփոխությունների,
- բ. փողի շրջապտույտի արագության փոփոխությունները հանգեցնում են իրական եկամտի փոփոխությունների,
- գ. փողի առաջարկի փոփոխությունները հանգեցնում են ՀՆԱ անվանական ծավալի փոփոխությունների,
- դ.ճիշտ պատասխանը նշված չէ:

36. Մանդել-Ֆլեմինգի մոդելում՝ լողացող փոխանակային կուրսի դեպքում, խթանող հարկաբյուջետային քաղաքականությունը.

- ա. IS*կորը տեղաշարժում է աջ, փոխանակային կուրսը աճում է, բայց դա չի ազդում եկամտի մակարդակի վրա,
- բ. չի տեղաշարժում IS*և LM*կորերը,
- գ. LM կորը տեղաշարժում է ձախ, փոխանակային կուրսը աճում է, բայց դա չի ազդում եկամտի մակարդակի վրա,
- դ.բոլոր պատասխանները ճիշտ են:

37. Մանդել-Ֆլեմինգի մոդելում լողացող փոխանակային կուրսի դեպքում խթանող դրամավարկային քաղաքականությունը.

- ա. LM*կորը տեղաշարժում է աջ, փոխանակային կուրսն իջնում է, և եկամտուն ավելանում,
- բ. IS*կորը տեղաշարժում է աջ, փոխանակային կուրսը աճում է, բայց դա չի ազդում եկամտի մակարդակի վրա,

գ. LM*կորը տեղաշարժում է ձախ, փոխանակային կուրսն իջնում է, և եկամուտն ավելանում,
դ. չի տեղաշարժում IS*և LM*կորերը:

38. Մանդել-Ֆլեմինգի մոդելում լրղացող փոխանակային կուրսի պայմաններում փողի առաջարկի կրճատման դեպքում.

ա. IS*կորը տեղաշարժվում է աջ, փոխանակային կուրսը բարձրանում է, բայց դա չի ազդում եկամտի մակարդակի վրա,

բ. LM*կորը տեղաշարժվում է աջ, փոխանակային կուրսն իջնում է, և եկամուտն ավելանում,

գ. LM*կորը տեղաշարժվում է ձախ, փոխանակային կուրսը բարձրանում է, և եկամուտը կրճատվում,

դ. ճիշտ պատասխանը նշված չէ:

39. ԿԲ-ն փողի բազայի(B) ընդլայնման համար օգտագործում է.

ա. բնակչությունից պետական փոխառությունների գնումն ու վերաֆինանսավորման տոկոսադրույքի իջեցումը,

բ. բնակչությանը պետական փոխառությունների վաճառքն ու վերաֆինանսավորման տոկոսադրույքի բարձրացումը,

գ. ավանդների պարտադիր պահուստավորման նորմի իջեցումը,

դ. բոլոր պատասխանները ճիշտ են:

40. Փողի առաջարկի մեծությունը որոշվում է.

ա. փողի բազայով (B),

բ. ավանդների պահուստավորման նորմով (rr),

գ. փողի դեպոնացման գործակցով (cr),

դ. բոլոր պատասխանները ճիշտ են:

41. Մանդել-Ֆլեմինգի մոդելում հաստատագրված փոխանակային կուրսի ռեժիմի պայմաններում, եթե տվյալ երկրի արժույթի հավասարակշիռ փոխանակային կուրսը ցածր է հաստատագրվածից, ապա.

ա.վերավաճառողները շուկայում գնում են տվյալ երկրի արժույթ և ԿԲ-ից դրա դիմաց ստանում արտասահմանյան արժույթ,

բ.վերավաճառողները ստանում են շահույթ՝ շուկայում արտասահմանյան արժույթ գնելով և հետո այն վաճառելով ԿԲ-ին, գ.հաստատագրված փոխանակային կուրսը չի կարգավորում փողի առաջարկը,

դ.բոլոր պատասխանները ճիշտ են:

42. Փոքր, բաց տնտեսության Մանդել-Ֆլեմինգի մոդելում հաստատագրված փոխանակային կուրսի պայմաններում խթանող հարկաբյուջետային քաղաքականությունը.

ա. LM* կորը տեղաշարժում է ձախ: ԿԲ-ն պետք է մեծացնի փողի առաջարկը, որպեսզի պահպանի հաստատագրված փոխանակային կուրսը,

բ. IS* կորը տեղաշարժում է ձախ: ԿԲ-ն պետք է մեծացնի փողի առաջարկը, որպեսզի պահպանի հաստատագրված փոխանակային կուրսը,

գ.IS*կորը տեղաշարժում է աջ: ԿԲ-ն պետք է մեծացնի փողի առաջարկը, որպեսզի պահպանի հաստատագրված փոխանակային կուրսը,

դ.IS* և LM*կորերը չեն տեղաշարժվում:

43. Փոքր, բաց տնտեսության Մանդել-Ֆլեմինգի մոդելում հաստատագրված փոխանակային կուրսի պայմաններում.

ա. դրամավարկային քաղաքականությունն իր սովորական իմաստով դառնում է անհնար,

բ.հարկաբյուջետային քաղաքականություն իրականացնել հնարավոր չէ,

գ.տեղի է ունենում հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացիա,

դ.բոլոր պատասխանները սխալ են:

44. Տվյալ պահին տնտեսությունում առկա փողի քանակությունը

անվանվում է.

- ա. փողի պահանջարկ,
- բ. փողի առաջարկ (զանգված),
- գ. փոխարժեքի մակարդակ,
- դ. թղթադրամի պահանջարկ:

45. Փողի զանգվածի չափերի կարգավորումը կոչվում է.

- ա. ներդրումային քաղաքականություն,
- բ. արժույթային քաղաքականություն,
- գ. հովանավորչական քաղաքականություն,
- դ. դրամավարկային քաղաքականություն:

46. Ո՞րն է փողի քանակական տեսության հավասարումը՝ ըստ եկամտի.

- ա. $MV=PT$,
- բ. $M/P=T/V$,
- գ. $MV=PY$,
- դ. $Y=F(K,L)$:

47. Երկարաժամկետում, ըստ փողի քանակական տեսության հավասարման, կայուն են.

- ա. փողի շրջապտույտի արագությունն ու գների մակարդակը,
- բ. փողի շրջապտույտի արագությունն ու իրական եկամուտը,
- գ. փողի առաջարկն ու իրական եկամուտը,
- դ. փողի առաջարկն ու գների մակարդակը:

48. Ըստ Ֆիշերի էֆեկտի (Ֆիշերի հավասարմանը համապատասխան).

- ա. գնաճի տեմպի փոփոխությունը չի առաջացնում անվանական տոկոսադրույքի փոփոխություն,
- բ. գնաճի տեմպի 1% մեծացումը բերում է անվանական տոկոսադրույքի 1% բարձրացմանը,
- գ. գնաճի տեմպի 1% մեծացումը բազմապատկում է անվանական տոկոսադրույքը,

դճիշտ պատասխանը նշված չէ:

49. Մանդել-Ֆլեմինգի մոդելում IS*կորը թեքված է դեպի աջ ներքև, քանի որ փոխարժեքի աճի դեպքում.

ա.ավելանում է զուտ արտահանումը, իսկ դրա հետ՝ նաև համախառն եկամուտը,

բ.նվազում է զուտ արտահանումը, իսկ դրա հետ՝ նաև համախառն իրական եկամուտը,

գ.բարձրանում է իրական տոկոսադրույքը, իսկ դրա հետ՝ նաև համախառն եկամուտը,

դճիշտ պատասխանը նշված չէ:

50. Ելնելով փողի քանակական տեսության հավասարումից՝ կարող ենք ասել, որ երկարաժամկետում.

ա.ՀՆԱ իրական ծավալը որոշվում է տնտեսության արտադրական հնարավորություններով,

բ.ՀՆԱ անվանական ծավալը որոշվում է փողի քանակությամբ,

գ.ՀՆԱ դեֆլյատորը որոշվում է ՀՆԱ անվանական և իրական ծավալների հարաբերությամբ,

դ.բոլոր պատասխանները ճիշտ են:

Թեստերի պատասխանները

- 1(ա); 2(ա); 3(դ); 4(գ); 5(ա);6(բ);7(ա); 8(գ); 9(բ);10(ա); 11(դ);
12(բ);13(դ); 14(բ); 15(ա); 16(գ); 17(գ); 18(բ);19(բ); 20(գ); 21(ա); 22(ա);
23(բ); 24(դ); 25(բ); 26(ա); 27(բ); 28(բ); 29(գ); 30(գ); 31(ա); 32(դ);
33(բ); 34(գ); 35(գ); 36(ա); 37(ա); 38(գ); 39(ա); 40(դ); 41(ա); 42(գ);
43(ա); 44 (բ); 45(դ); 46(գ); 47(բ); 48(բ); 49(բ); 50(դ):

Տիգրանյան Վարսիկ Իշխանի

ՄԱԿՐՈՏՆՏԵՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ուսումնամեթոդական ձեռնարկ

Ծրագիր

Դասախոսությունների և սեմինար պարապմունքների պլան,

նյութեր

Թեստային առաջադրանքեր

ԳՀԽ-ի գլխավոր խմբագիր – *Ս.Է. Ավագյան*

Խմբագիր – *Ա.Ս. Եսայան*

Համակարգչային դասավորություն – *Ա.Ս. Բժիկյան*

Գիտական հրապարակումների խմբագրության հասցեն՝

Հայ-Ռուսական համալսարան

0051, ՀՀ, Երևան, Հովսեփ Էմինի փ., 123

հեռ.Ֆաքս՝ (+374 12) 77-57-75, (ներքին 392)

Էլ. փոստ՝ maria.avakian@rau.am

Ստորագրված է հրապարակման՝ 19.02.2024թ.

Ձևաչափ 60x84/16: Օֆսեթ թուղթ՝ No 1.

Ծավալ 5,3 տ.թ. Տպաքանակը՝ 100 օրինակ



Վարսիկ Իշխանի Տիգրանյան Տնտեսական գիտությունների թեկնածու

Գերագանց ավարտել է Երևանի պետական
ժողովրդական տնտեսության ինստիտուտի
ընդհանուր տնտեսագիտության ֆակուլտետը՝
«Էկոնոմիկայի պետական կարգավորում»

մասնագիտությամբ:

Հետբուհական կրթությանը իրականացրել է Հայաստանի
պետական տնտեսագիտական համալսարանի
մակրոէկոնոմիկայի ամբիոնում: 2013թ. պաշտպանել է
տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսությունը՝ «Տնտեսական ճգնաժամերի
հետևանքների հաղթահարման մակրոտնտեսական
հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայով:

2014թ.-ից դասավանդում է Հայաստանի պետական
տնտեսագիտական համալսարանի մակրոէկոնոմիկայի
ամբիոնում:

2018թ.-ից դասավանդում է Հայ-Ռուսական համալսարանի
տնտեսագիտության տեսության և անցումային
շրջանի տնտեսության հիմնախնդիրների ամբիոնում:
Մասնակցել է թվով 10 գիտահետազոտական ծրագրերի
իրականացման աշխատանքների՝ որպես գիտաշխատող,
ծրագրի ղեկավար: Մասնագիտական հմտություններն ու
կարողությունները ընդլայնելու նպատակով մասնակցում է
տեղական և միջազգային գիտաժողովների, ինչպես նաև
վերապատրաստումների, որակավորման բարձրացման
դասընթացների:

Գիտական հետաքրքրությունների շրջանակն
ընդգրկում է՝ մակրոտնտեսական հիմնախնդիրներ,
տնտեսական ցիկլեր, տնտեսական քաղաքականություն,
մակրոտնտեսական մոդելավորում, տնտեսական
ինտեգրացիա, զբոսաշրջային ինդուստրիա,
տնտեսագիտական ուսմունքների էվոլյուցիա: Հեղինակ է
թվով 26 տպագրված գիտական աշխատանքների:

ISBN 978-9939-67-335-4

